9
ՄԱՐՏԻ
2021

Luys Լույս®



2020Թ. ՊԱՏԵՐԱԶՄ. ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՂԵՏԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2020Թ. ՊԱՏԵՐԱԶՄ. ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՂԵՏԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տիգրան Թոոսյան

Քաղաքական գիտությունների դոկտոր,
Հեռանկարային հետազոտությունների
և նախաձեռնությունների կենտրոն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....1

1. «ԹԱՎՇՅԱ» ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆԵՐԸ. ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԱՃՊԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՒՏ.....3

1.1. Արտաքին քաղաքականության «թավշյա» և նախընթաց շրջանները.....5

1.2. «Ռուսական առաջարկները» և ԼՂ կարգավիճակի հարցը.....9

2. ԿԱՊԻՏՈՒԼՅԱՑԻԱՅԻՑ ՀԵՏՈ. ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ 22

2.1. Հակամարտության կարգավորման գործընթացի նոր փուլը.....22

2.2. Ռուսաստանի առանցքային դերակատարությունը 26

2.3. Թուրքիա և Ադրբեջան. գայթակղել ԵՄ-ին հանուն թյուրքական աշխարհի.....33

2.4. Աշխարհաքաղաքականություն և էներգակիրներ. լրացուցիչ, բայց ոչ երկրորդական գործոն.....35

2.5. Արևմուտքի դիրքորոշումը. պատերազմ և կարգավորում.....40

2.6. ՀՀ և ԼՂՀ. կործանո՞ւմ, թե՞ վերածնունդ.....43

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....46

ՆԱԽԱԲԱՆ

2020թ. ադրբեջանաթուրքական ռազմական ագրեսիան և Հայաստանի իշխանությունների կապիտուլյացիան Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության համար ունեցան աղետալի հետևանքներ՝ հազարավոր զոհեր ու գերիներ, տասնյակ հազարավոր վիրավորներ, նյութական ու բարոյահոգեբանական ահռելի կորուստներ, «Լեռնային Ղարաբաղի հարակից» բոլոր տարածքների կորուստ, Լեռնային Ղարաբաղի Ասկերանի, Հադրութի, Մարտունու, Մարտակերտի շրջանների հատվածների, Շուշի և Հադրութ քաղաքների կորուստ, հայկական բանակի ջախջախում, Հայաստանի Հանրապետության մի շարք սահմանամերձ տարածքների վերածևում՝ ի նպաստ Ադրբեջանի, դաշնակից պետությունների հետ հարաբերությունների կտրուկ վատթարացում և անհուսալի ու անպատասխանատու գործընկերոջ համբավի վաստակում: Ակնհայտ է, որ թեև նման ահռելի կորուստների դեպքում դժվար է միմյանցից տարանջատել ներքին և արտաքին գործոնները, սակայն Լեռնային Ղարաբաղի հակամարտության առանցքային տեղը ծավալված իրադարձություններում առաջնային է դարձնում արտաքին հարաբերությունների ուսումնասիրությունը՝ հատկապես 2018 թվականի իշխանափոխությունից հետո, քանի որ այդ պատերազմից առաջ արդեն պարզ էր, որ կուտակվում են բազմաթիվ մարտահրավերներ, և թույլ են տրվում սկզբունքային սխալներ, որոնք վտանգում են հակամարտության կարգավորման գործընթացը:[1] Սակայն ձախողումները չսահմանափակվեցին կարգավորման գործընթացով և անգամ պատերազմով: Իրավիճակն ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ Հայաստանի գլխովին ձախողված քաղաքական ղեկավարությունը, արհամարհելով մարդկության պատմության պոստուլատներից մեկը՝ «պարտված իշխանությունը պետք է հեռանա», ամեն կերպ կառչած է մնում իշխանությանը՝ հնարավորություն չստեղծելով նոր կառավարության ձևավորման ու չափազանց բարդ խնդիրների լուծման համար: Պատերազմի արդյունքում կրած աղետալի կորուստները, որոնք ահագնանում են նաև հրադադարի հաստատումից հետո, հետագա զարգացումների հետ կապված անորոշություններն ու չարագուշակ ենթադրությունները պահանջում են գնահատել 2018թ. իշխանափոխությունից հետո Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխություններն ու դրանց ազդեցությունն այդ պատերազմի արդյունքների և Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող՝ Լեռնային

[1] Տ. Թորոսյան, ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի փուլերը, իրավիճակն ու հեռանկարները, https://www.luys.am/img/artpic/small/719d9a46a82fdcab7573ԼՂԳործընթաց.pdf

Ղարաբաղի հիմնախնդրի լուծման վրա՝ խորացող աշխարհաքաղաքական մրցակցության պայմաններում: Քանի որ ադրբեջանաթուրքական ագրեսիան կտրուկ մեծացրել է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության անվտանգության սպառնալիքները, հայության առջև ծառացել են վերջին հարյուրամյակի համար աննախադեպ մարտահրավերներ: Կործանումից խուսափելու և չափազանց բարդ մարտահրավերները հաղթահարելու համար պահանջվում է վերարժևորել երեք տասնամյակի անկախության ընթացքում արձանագրված ձեռքբերումները, հաջողությունները, ձախողումներն ու սխալները, բացահայտել դրանց հիմքերն ու պատճառները:

Այս ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել արտաքին քաղաքականության ոլորտում ձախողումների պատճառները, որոնք հանգեցրին աղետի, գնահատել այդ ոլորտում առկա իրավիճակը և ուրվագծել այն խնդիրները, որոնց լուծումը թույլ կտա հաղթահարել աղետալի իրավիճակը, ապահովել Հայաստանի Հանրապետության վերածնունդն ու փրկել Արցախը:

1. «ԹԱՎՇՅԱ» ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆԵՐԸ. ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԱՃՊԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՒՏ

Որևէ ժամանակաշրջանում որևէ ոլորտում իրականացվող քաղաքականությունը գնահատելու համար անհրաժեշտ է ունենալ նախընթաց շրջանի վերաբերյալ մասնագիտական հետազոտություն, դրա եզրակացությունների հիման վրա ձևակերպված խնդիրների լուծման հայեցակարգ կամ ծրագիր և դրա արդյունքներն արձանագրող փաստաթուղթ: 2018թ. Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո որևէ, այդ թվում՝ արտաքին քաղաքականության ոլորտի, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական ուսումնասիրություն կառավարությունը չի պատվիրել և չի հրապարակել: Բնականաբար, չէին կարող արձանագրվել առկա խնդիրները, և չի ներկայացվել դրանց լուծման հայեցակարգ կամ ծրագիր: Կառավարության գործունեության 2018թ.[2] և 2019թ.[3] ծրագրերում և դրանց արդյունքները ներկայացնող հաշվետվությունում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին վերաբերող արձանագրումները տպավորություն են ստեղծում, որ 2018թ. իշխանափոխության արդյունքում ձևավորված կառավարությունը շարունակել է նախորդի քաղաքականությունը: Դրանցում առկա 2 նախադասությունները ոչնչով չեն տարբերվում, օրինակ, 2017-22 թվականների ծրագրի համապատասխան հատվածից. «Արտաքին քաղաքականության ոլորտում Կառավարությունը գործելու է՝

- ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում ղարաբաղյան հիմնախնդրի՝ բացառապես խաղաղ կարգավորման ուղղությամբ, ինչի հիմքում պետք է ընկած լինեն միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները, մասնավորապես, ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքը: Արցախի կարգավիճակը և անվտանգության ապահովումը բանակցային գործընթացում Հայաստանի առաջնահերթ գերակայություններն են»[4]: Իսկ 2020թ. փետրվարի 27-ին հաստատվել է կառավարության գործունեության ծրագրի կատարման արդյունքները ներկայացնող զեկույցը՝ արձանագրելով. «Հայաստանը շարունակել է սերտ համագործակցությունը միջազգային միջնորդների՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի

[2] Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, 2018թ., https://www.gov.am/files/docs/2782.pdf
[3] Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, 2019թ., https://www.gov.am/files/docs/3133.pdf
[4] Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, 2017-2022 թթ., https://www.gov.am/files/docs/2207.pdf

համանախագահների հետ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ, որի հիմքում ընկած են եղել միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները, մասնավորապես, ժողովուրդների իրավահավասարությունը և ինքնորոշման իրավունքը»[5]: Մինչդեռ հիմնախնդրին վերաբերող իրադարձությունների զարգացումը 2018-2021թթ. վկայում է, որ արմատապես փոխվել է Հայաստանի քաղաքականությունը՝ հանգեցնելով աղետալի արդյունքների:[6] Դա է վկայում նաև Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Ի. Պոպովը՝ 2021թ. հունվարի 13-ին պատասխանելով դրանից մի քանի օր առաջ Հայաստանի վարչապետի հրապարակած «44-օրյա պատերազմի ծագումը» հոդվածի[7] հաստատագրումներին. «Ո՛չ հայկական, ո՛չ ադրբեջանական կողմերը չեն մերժել այդ առաջարկությունները, թեև լիարժեք համաձայնության հասնել չէր հաջողվում: Ընդհուպ մինչև ***2018թ., երբ Երևանն առաջադրեց նոր մոտեցումներ***»[8] (ընդգծումն իմն է - Տ.Թ.): Ոչ միայն դիվանագետների, այլև ցանկացած ողջամիտ մարդու համար միանգամայն պարզ է Ի. Պոպովի ձևակերպումը՝ գործընթացը տապալվել է «Երևանի առաջադրած նոր մոտեցումների» հետևանքով: Այդ «նոր մոտեցումները» որևէ ձևով չեն արտացոլվել կառավարության ծրագրային փաստաթղթերում, այլ ճիշտ հակառակը՝ դրանցում արձանագրվել է, որ իբր Հայաստանը շարունակել է սերտ համագործակցությունը: Հետևաբար, կառավարության ծրագրային փաստաթղթերի մակարդակով տեղի է ունեցել կեղծիք, և դրանք չեն կարող հիմք դառնալ այդ ժամանակահատվածի արտաքին քաղաքականության վերլուծության համար: Հավաստի պաշտոնական փաստաթղթերի բացակայության պատճառով ստորև «թավշյա» շրջանի արտաքին քաղաքականության կարևորագույն՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին առնչվող զարգացումների գնահատման հիմք են ընդունվել կառավարության ղեկավար Ն.

---

[5] ՀՀ կառավարության ծրագրի 2019թ. կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույց https://www.gov.am/files/docs/3932.pdf

[6] Տ. Թորոսյան, ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի փուլերը, իրավիճակն ու հեռանկարները, https://www.luys.am/img/artpic/small/719d9a46a82fdcab7573ԼՂԳործընթաց.pdf
Տ. Թորոսյան, Դիվանագիտական լուծում կա. Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հնարավորություններն ու հեռանկարները 2020թ. պատերազմից հետո, https://luys.am/img/artpic/small/ca628a9162b4fa5916e3Դիվանագիտականլուծումկա.pdf

[7] Ն. Փաշինյան, 44-օրյա պատերազմի ծագումը, https://www.primeminister.am/hy/interviews-and-press-conferences/item/2021/01/04/NikolPashinyan-04-01/

[8] Ответ российского сопредседателя в Минской группе ОБСЕ, Посла по особым поручениям МИД России И.В.Попова на вопрос СМИ относительно статьи Премьер-министра Армении Н.В.Пашиняна «Истоки 44-дневной войны», www.mid.ru\ru\foreign_policy\news\-\asset_publisher\cKNonkJE02Bw\content\id\4519475

Փաշինյանի վերոհիշյալ հոդվածը, որտեղ նա փորձում է գնահատել խնդրի կարգավորման ընթացքը մինչև 2018 թվականը և իր քաղաքականության արդյունքում տեղի ունեցած աղետի պատճառները:

1.1. Արտաքին քաղաքականության «թավշյա» և նախընթաց շրջանները

2020թ. հուլիսին հրապարակվեց «ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի փուլերը, իրավիճակն ու հեռանկարները» հոդվածը[9], որտեղ ամփոփ ներկայացվել են ՀՀ առաջին երեք նախագահների և ներկայիս վարչապետի կառավարման ժամանակաշրջաններում ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի զարգացումները, ձեռքբերումներն ու ձախողումները: Հրապարակման նպատակներն էին նախընթաց շրջանի էությունը սեղմ, մասնագիտական հիմքերով ներկայացնելն ու 2018թ. իշխանափոխությունից հետո արձանագրվող վտանգավոր դրսևորումների բացահայտումը: Այդ հոդվածում ցույց է տրվում, որ 2018-ից Հայաստանի դիրքորոշումները խիստ արտառոց դրսևորումներ են ունեցել, որոնք, ըստ եզրակացության, կարող են հանգեցնել վտանգավոր արդյունքների. «ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացը չափազանց բարդ ու տևական երևույթ է, որտեղ պահանջվում է խիստ համախմբվածություն, նպատակաուղղվածություն, ռազմավարական ու մարտավարական ծրագրերի մասնագիտական մշակումներ ու իրականացում, հատվածական շահերի, հների ու նորերի բաժանումների բացառում: Թե՛ ՀՀ-ում, թե՛ ԼՂՀ-ում հակամարտության կարգավորման գործընթացում նոր դերակատարների ներգրավումն իշխանության փոփոխության արդյունքում օբյեկտիվ մարտահրավերներ է ձևավորում և **բանակցություններին, անգամ բանավեճերին առանց անհրաժեշտ գիտելիքների ու նախապատրաստության մասնակցությունը թուլացնում է դիրքերն ու վտանգներ ստեղծում անբարենպաստ լուծումների համար: Հետևաբար, հատկապես այդ շրջանում պետք է զերծ մնալ հեղափոխական քայլերի ձգտումներով ու չկշռադատված առաջարկներով պայմանավորված հախուռն գործողություններից»**[10] (ընդգծումն իմն է - Տ.Թ.):

Հայաստանի ներկայիս վարչապետի վերոհիշյալ հոդվածը վկայում է, որ աղետալի հետևանքների հասցրած նրա թյուր պատկերացումները վերաբերում են ոչ միայն հակամարտության ներկայիս փուլին, այլև նախընթաց շրջանին: Ստորև

[9] Տ. Թորոսյան, ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի փուլերը, իրավիճակն ու հեռանկարները, https://www.luys.am/img/artpic/small/719d9a46a82fdcab7573ԼՂԳործընթաց.pdf
[10] Նույն տեղում:

մանրամասն անդրադարձ չի լինի այդ շրջանի վերաբերյալ նրա ընդհանրական, անհիմն գնահատականներին, ինչպես, օրինակ՝ «բանակցային գործընթացը 1994թ. մայիսի 12-ի զինադադարի կետից նահանջի մի մեծ գործընթաց է»[11]: Նման գնահատականը կարող է հետևանք լինել կա՛մ բացարձակ տգիտության, կա՛մ բացարձակ կեղծիքի, քանի որ, օրինակ՝ «ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի փուլերը, իրավիճակն ու հեռանկարները» հոդվածում անհերքելի հիմնավորումներով ցույց է տրվում, որ բանակցային գործընթացը բաղկացած է միմյանցից էականորեն տարբերվող 4 փուլերից, որոնցից առաջինի ընթացքում, օրինակ՝ բանակցային փաստաթղթերում, ոչ մի խոսք չի եղել ԼՂ ինքնորոշման մասին, մինչդեռ երկրորդ և երրորդ փուլերում ինքնորոշման սկզբունքը եղել է կարգավորման գործընթացի երեք գլխավոր սկզբունքներից մեկը: Բանակցային գործընթացում նահանջի մասին կարող է խոսք լինել միայն 4-րդ՝ 2018թ. սկսված փուլի դեպքում, ինչը հաստատում է նաև ռուսաստանցի համանախագահ Ի. Պոպովի վերոհիշյալ արձանագրումը: Ստորև ցույց կտրվի, որ այդ ընթացքում մի կողմից՝ դրսևորվում էր «Երևանի նոր մոտեցումների» լիակատար տգիտությունը, մյուս կողմից՝ Ռուսաստանին ու Մինսկի խմբի մյուս համանախագահներին վերագրվում էին այնպիսի անհեթեթ մոտեցումներ, որոնք ոչ միայն որևէ կապ չունեն իրականության հետ, այլև չեն կարող չզայրացնել անգամ ամենահամբերատար միջնորդներին: Որո՞նք էին այդ մոտեցումները, որոնք նպատակ ունեին «փոխելու բանակցային տրամաբանությունը»: Ըստ Ն. Փաշինյանի՝ այդ խնդրի լուծմանն էին ուղղված իր գործողությունները 2018 թվականից ի վեր, և գործընթացը գագաթնակետին հասավ 2019 թվականի մարտի 12-ին Ստեփանակերտում տեղի ունեցած՝ Հայաստանի և Արցախի անվտանգության խորհուրդների համատեղ նիստում, որտեղ ինքը հանդես է եկել «Արցախի իշխանությունների հետ համաձայնեցված ծրագրային ելույթով... Այդ ելույթի թեզերը հետևյալն էին. բանակցային գործընթացում Արցախի ներկայացուցիչների մասնակցության հարցը պետք է լինի մեր օրակարգում, Մադրիդյան սկզբունքները պետք է ունենան միասնական մեկնաբանություն, որովհետև Ադրբեջանն այն յուրովի է մեկնաբանում, Հայաստանը՝ յուրովի, ինչը գործընթացը դարձնում է անարդյունավետ, և հետո՝ հասարակություններին պետք է պատրաստել խաղաղության և Ղարաբաղի հարցի որևէ լուծում պետք է ընդունելի լինի Հայաստանի ժողովրդի համար, Արցախի ժողովրդի համար, Ադրբեջանի ժողովրդի համար»[12]:

---

[11] Ն. Փաշինյան, նշված աշխատանքը, https://www.primeminister.am/hy/interviews-and-press-conferences/item/2021/01/04/NikolPashinyan-04-01/

[12] Նույն տեղում:

Առաջին ձևակերպումը՝ «Արցախի ներկայացուցիչների մասնակցության հարցը պետք է լինի մեր օրակարգում», որևէ կապ չունի բանակցային գործընթացի հետ, քանի որ «մեր օրակարգն» ու «բանակցային օրակարգը» միանգամայն տարբեր բաներ են և ակնկալիքը, որ քո օրակարգում հարց ներառելով, այն կհայտնվի բանակցային օրակարգում՝ կա՛մ պարզունակ տգիտություն է, կա՛մ երեսպաշտություն: Հատկապես որ արմատական որևէ փոփոխության առաջարկ Բաքվի համար լավ առիթ կլիներ իր համար անբարենպաստ զարգացումներից խուսափելու համար՝ խափանման մեղքը բարդելով հայկական կողմերի վրա: Դժվար չէր կանխատեսել այդ «մոտեցման» նկատմամբ համանախագահների վերաբերմունքը, քանի որ նրանց դրական արձագանքի որևէ դրսևորում կխթաներ Ադրբեջանի համապատասխան արձագանքը և կխափաներ ավելի քան մեկ տասնամյակի իրենց ջանքերը:

«Մոտեցումների» հիմքում մնում է երկու պնդում՝

1) Մադրիդյան սկզբունքները պետք է ունենան միասնական մեկնաբանություն, որովհետև Ադրբեջանն այն յուրովի է մեկնաբանում, Հայաստանը՝ յուրովի,

2) Ղարաբաղի հարցի որևէ լուծում պետք է ընդունելի լինի Հայաստանի ժողովրդի համար, Արցախի ժողովրդի համար, Ադրբեջանի ժողովրդի համար:

Առաջին պնդումը բացարձակ տգիտության հետևանք է: «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ մագիստրատուրայում սովորող յուրաքանչյուր ուսանող գիտի, որ հակամարտությունների կարգավորման գործընթացն ունի երկու հիմնական բաղադրիչներ՝ ***իրավական*** և ***քաղաքական***: Հակամարտության կողմերի դիրքորոշումները նրանց ***քաղաքական*** տեսակետներն են և կարող են չհամապատասխանել միջազգային իրավունքի ***իրավական*** նորմերին: Հնարավոր չէ որևէ մեկից պահանջել, որ ապահովի կողմերի «միասնական մեկնաբանություն»: Ավելին, կողմերը միջազգային իրավունքի նորմերը «մեկնաբանելու» լիազորություն չունեն: «Մադրիդյան սկզբունքներ» կոչվող բանակցային փաստաթուղթը հիմնված է միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից երեքի վրա, որոնց վերաբերյալ միջազգային իրավունքը տվել է հստակ և սպառիչ ձևակերպումներ[13]: Կողմերն իրենք են որոշում, թե իրենց ***քաղաքական դիրքորոշումներն*** ինչքանով են համապատասխանում ***իրավական***

[13] S. Թորոսյան, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Երևան, Տիգրան Մեծ, 2008; S. Թորոսյան, Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան, Տիգրան Մեծ, 2012; T. Torosyan, A. Vardanyan, The South Caucasus Conflicts in the Context of Struggle for the Eurasian Heartland, *Geopolitics*, 2015, vol. 17, No 3, pp. 559-582; T. Torosyan, To the Resolution of Intractable Conflicts, *Iran and Caucasus,* vol. 17, No1, 2013, pp. 120-129.

նորմերին: Նրանք, իրենց նպատակներից ելնելով, ներգրավում են համապատասխան մասնագետներ, որոնք կարող են կարծիք ներկայացնել այս կամ այն հարցը միջազգային իրավունքի շրջանակներում լուծելու կամ, եթե այդ կողմի շահերն այլ բան են պահանջում, խոչընդոտելու համար:

Միջազգային իրավունքի և միջազգային բանակցությունների վերաբերյալ տարրական գիտելիքներ ունեցող յուրաքանչյուր ոք գիտի այն պարզ ճշմարտությունը, որ միջազգային իրավունքի նորմերը կարող են մեկնաբանել համապատասխան կառույցները, օրինակ, հակամարտությունների դեպքում՝ Արդարադատության միջազգային դատարանը: Կան ՄԱԿ-ի այդ կառույցի մի շարք կարծիքներ, որոնցում հստակ և սպառիչ մեկնաբանվել են և՛ ինքնորոշման իրավունքը, և՛ տարածքային ամբողջականության սկզբունքը:

Չի եղել գեթ մեկ հակամարտություն, որի կողմերը նույն ձևով ընկալեն միջազգային իրավունքի նորմերը, առավել ևս՝ «մեկնաբանեն»: Պարզ տրամաբանությունը հուշում է, որ այդ դեպքում հակամարտությունն անմիջապես կլուծվեր և բանակցությունների կարիք չէր լինի: Ավելին, չի եղել ինքնորոշման գեթ մեկ հակամարտություն, որի լուծումը ձեռք բերված լիներ բանակցությունների միջոցով: Լուծումները պարտադրել է ՄԱԿ-ը՝ միջազգային իրավունքի հիման վրա:

Երկրորդ «մոտեցումը» և՛ տգիտության, և՛ երեսպաշտության հետևանք է: Չի եղել որևէ ինքնորոշման հակամարտություն, որի լուծումը բավարարի բոլոր կողմերին: Նման լուծում չի էլ կարող լինել, քանի որ որևէ մետրոպոլիա երբեք չի համաձայնել ինքնորոշվող կողմի անկախությանը և չի համաձայնի, քանի որ մետրոպոլիայի իշխող քաղաքական ուժի համար դա կլինի քաղաքական ինքնասպանություն:

Մի՞թե հնարավոր է ողջամտորեն ակնկալել, որ նման «մոտեցումներ» ներկայացնելով՝ հնարավոր է փոխել բանակցությունների տրամաբանությունը, եթե որպես այդպիսիք չեն ենթադրվում դրանց հիմնովին ձախողումն ու աղետալի հետևանքները:

Զարհուրելի է, որ այդ «ծրագրային ելույթը» լսած ՀՀ և ԼՂՀ Անվտանգության խորհուրդներում չի գտնվել գեթ մեկը, ով «բանակցային տրամաբանությունը» փոխելու նման աղետալի փորձերին ընդդիմանալու քաջություն ունենար:

Սակայն տգիտության ու երկրի համար կենսական նշանակություն ունեցող հիմնախնդրի լուծումը մեծապես վտանգող դատողությունների, կեղծիքի ու աճպարարության օրինակները ՀՀ կառավարության ղեկավարի հոդվածում և երկրի արտաքին քաղաքական գործունեությունում բազմաթիվ են ոչ միայն «ծրագրային» մակարդակով, այլև ԼՂ հիմնախնդրին վերաբերող կոնկրետ խնդիրների վերաբերյալ: Ստորև կներկայացվեն հիմնախնդրի կարգավորման տեսակետից բացառիկ

նշանակություն ունեցող՝ սերտորեն փոխկապակցված երկու հարցերի՝ այսպես կոչված «ռուսական առաջարկների» և ԼՂ կարգավիճակի հետ կապված խեղաթյուրումները, կեղծիքներն ու տգետ ձևակերպումները:

1.2. «Ռուսական առաջարկները» և ԼՂ կարգավիճակի հարցը

Ըստ Ն. Փաշինյանի՝ «ռուսական առաջարկների» «առանցքային պրոբլեմը Արցախի կարգավիճակի դուրսմղումն է բանակցային օրակարգից»: Դա «հիմնավորելու» նպատակով նա ամբողջությամբ խեղաթյուրում է կարգավորման գործընթացը.

«2015-ին վերջնականորեն ձևակերպվում են հիմա արդեն հանրահայտ ***ռուսական առաջարկները, որոնք նախատեսում են 7 տարածքների վերադարձը Ադրբեջանին՝ 5+2 բանաձևով, փախստականների վերադարձ, ռուս խաղաղապահների տեղակայում: Առաջարկությունների փաթեթը որևէ կերպ չէր անդրադառնում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցին, շրջանցում էր այդ հարցը...*** Ֆորմալ առումով 2016 թվականից հետո էլ բանակցային գործընթացը շարունակում է տեղի ունենալ Մադրիդյան սկզբունքների կամ դրանց կոնֆիգուրացիայի հիման վրա, բայց ռուսական առաջարկները կան, գոյություն ունեն և նրանց ներկայությունը զգացվում է ամենուր, առնվազն այն տրամաբանությամբ, որ ***7 տարածքների հանձնումը 2018 թվականի դրությամբ բանակցային գործընթացի հիմնական, եթե ոչ միակ թեման է: Ինչ վերաբերում է ԼՂ կարգավիճակին, ԵԱՀԿ ՄԽ համանախագահությունը արդեն տեղավորվել է այն տրամաբանության մեջ, որ այդ հարցը քննարկելի է այնքանով, որքանով քննարկելի է Ադրբեջանի համար»***[14] (ընդգծումներն իմն են - Տ. Թ.):

Արդարանալու նպատակով Հայաստանի վարչապետը չի խորշում անգամ հանրահայտ փաստերի ու բանակցային փաստաթղթերի բովանդակության կեղծումից և Ռուսաստանին ու Մինսկի խմբի մյուս համանախագահող երկրներին մեղադրանքներ ներկայացնելուց: Դրանք այնքան աղաղակող են, որ ռուսաստանցի համանախագահ Ի. Պոպովը դիմել է դիվանագիտական հարաբերություններում խիստ հազվադեպ հանդիպող քայլի՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության կայքում բացահայտել է կեղծիքը և վերը բերված

[14] Ն. Փաշինյան, նշված աշխատանքը , https:\www.primeminister.am\hy\interviews-and-press-conferences\item\2021\01\04\NikolPashinyan-04-01\

«դատողությունների» ողջ սնանկությունը՝ կրկին հիշեցնելով առաջարկությունների բովանդակությունը.

«Ռուսական առաջարկներ ասելով՝ հավանաբար ենթադրվում է փուլային կարգավորման պլանը, որի վերջին խմբագրումը կողմերին փոխանցել են Մինսկի խմբի համանախագահները 2019թ. հունիսին: Կազանյան փաստաթղթի հետ շատ բաներով համընկնող այդ պլանի հիմքում ընկած են ԼՂ կարգավորման բազային սկզբունքները, որոնց շարքում առաջին փուլում հինգ շրջանների վերադարձն է Ադրբեջանին, իսկ երկրորդ փուլում՝ երկու շրջանների, ընդ որում, հատուկ ընդգծում եմ, դա կապելով Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հետ: Առաջին փուլի Երևանի հետաքրքրություններն արտացոլող տարրերից են Լեռնային Ղարաբաղի՝ իր բնակչության լիարժեք կենսագործունեության ապահովման իրավունքի ընդունումը, ԼՂ ներկայացուցիչների մասնակցությունը ԵԱՀԿ նիստերին, շրջափակման վերացումը, ուժի չկիրառման վերաբերյալ կողմերի պարտավորությունների ստանձնումը և այլն: Այդ պատճառով պնդումը, որ Ռուսաստանը առաջարկում էր 7 շրջանները վերադարձնել «հենց այնպես» և մոռանալ կարգավիճակի մասին, չի համապատասխանում իրականությանը:

Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի խնդրի լուծման տարբերակներին, ապա վերջին տարիներին բանակցությունների սեղանին գտնվող առաջարկները՝ որպես վերջնական նպատակ նախատեսում էին, մեջբերում եմ. ***«Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշումը կողմերի համաձայնեցրած ժամկետներում ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ-ի հովանու ներքո համաժողովրդական քվեարկության անցկացում, որը կարտահայտի Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատ կամարտահայտությունը և կունենա իրավականորեն պարտադիր բնույթ՝ միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների համաձայն: Ընդ որում, քվեարկության դրվող հարցը կամ հարցերը որևէ ձևով չեն սահմանափակվի, իսկ քվեարկության ցանկացած արդյունք կողմերը կհարգեն»***: Ի դեպ, Լաչինի միջանցքի լայնությունն ու կարգավիճակը ևս առաջարկվում էր դիտարկել միայն երկրորդ փուլում՝ հաշվի առնելով Քելբաջարի և Լաչինի շրջաններն Ադրբեջանին վերադարձնելը:

Ո՛չ հայկական, ո՛չ ադրբեջանական կողմերը չեն մերժել այդ առաջարկությունները, թեև լիարժեք համաձայնության հասնել չէր հաջողվում: Ընդհուպ մինչև 2018թ., երբ Երևանն առաջադրեց նոր մոտեցումներ»[15]:

[15] Ответ российского сопредседателя в Минской группе ОБСЕ, Посла по особым поручениям МИД России И.В.Попова на вопрос СМИ относительно статьи Премьер-министра Армении Н.В.Пашиняна

Ի. Պոպովի այս արձագանքը թույլ է տալիս հստակորեն ձևակերպել մի քանի հետևություններ.

1. Մինչև 2018թ. իշխանափոխությունը, երբ քննարկման առարկա է եղել խնդրի փաթեթային լուծման և երկփուլ կարգավորման պլանը, որը հստակորեն սահմանում էր բոլոր, այդ թվում՝ նաև ԼՂ կարգավիճակի խնդիրը, դրա լուծման մեխանիզմով և դրա իրագործմամբ էր պայմանավորում Քարվաճառի (Քելբաջար) և Քաշաթաղի (Լաչին) շրջանների վերահսկողության հարցը: Այդ պլանը սկսել է ձախողվել, երբ պաշտոնական Երևանը 2018թ. իշխանափոխությունից հետո առաջադրել է «նոր մոտեցումներ», որոնց անհեթեթությունն ու վտանգավորությունը բացահայտվել է ինչպես վերևում, այնպես էլ դեռևս 2020թ. հուլիսին հրապարակված հոդվածում[16]:

2. Ն. Փաշինյանի այն հայտարարությունը, որ «առաջարկությունների փաթեթը որեւէ կերպ չէր անդրադառնում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցին, շրջանցում էր այդ հարցը», դիվանագիտական հարաբերությունները կոպտորեն ոտնահարող աղաղակող հերյուրանք է համանախագահների հասցեին:

3. Մինչև 2018թ. իշխանափոխությունը, քննարկված պլանը միայն պայմանականորեն կարելի է համարել «ռուսական», քանի որ, թեև այն մշակել են Ռուսաստանի ներկայացուցիչները, սակայն մի քանի անգամ ներկայացրել են Մինսկի խմբի համանախագահները: Ակնհայտ է, որ տարիների ընթացքում քննարկումների առարկա եղած պլանի մերժումը Երևանից՝ ներկայացնելով բացարձակապես անհիմն, անլուրջ ու խելացնոր «մոտեցումներ», չէր կարող համապատասխան վերաբերմունք չառաջացնել համանախագահների շրջանում:

4. «Թավշյա» կառավարության արտաքին քաղաքական արկածախնդրության արդյունքները՝ հազարավոր զոհեր, հարյուրավոր գերիներ, տասնյակ հազարավոր վիրավորներ, պաշտպանական բնագծերի կորուստ, 7 շրջանների և նախկին ԼՂԻՄ-ի զգալի տարածքների կորուստ, համատարած ավերածություններ Արցախում, նյութական ու ռեսուրսային հսկայական կորուստներ, բարոյահոգեբանական ծանր հարված հայությանը և այլն, համեմատության որևէ եզր չունեն այն արդյունքների հետ, որոնք հայկական կողմերը կարող էին ստանալ, եթե անգամ պարզապես իրագործվեր համանախագահների պլանը, որը փորձ է արվում ներկայացնել որպես «ռուսական»:

«Истоки 44-дневной войны», https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4519475

[16] Տ. Թորոսյան, ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի փուլերը, իրավիճակն ու հեռանկարները, https:\www.luys.am\img\artpic\small\719d9a46a82fdcab7573ԼՂԳործընթաց.pdf

Կարո՞ղ էր աղետը կանխվել: Այո, քանի որ ահազանգ հնչեցնում էին ոչ միայն երկրի ներսում, այլև արտաքին քաղաքական գործընկերները, իսկ աղետալի գահավիժումը տեղի է ունեցել աստիճանաբար՝ խելացնոր «մոտեցումների» համառ առաջմղմամբ: Դեռևս 2019թ. մարտի 9-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները հայտարարել են.

«Մինսկի խմբի գործունեության բնույթի վերաբերյալ վերջերս արված հակասական հրապարակային հայտարարությունների առնչությամբ համանախագահները վերահաստատում են, որ արդար և տևական կարգավորումը պետք է հիմնվի Հելսինկյան եզրափակիչ ակտի առանցքային սկզբունքների վրա, ներառյալ ուժի կամ դրա սպառնալիքի չկիրառումը, տարածքային ամբողջականությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը: Այն պետք է նաև ներառի լրացուցիչ տարրեր, որոնք 2009-2012 թվականներին առաջարկվել են համանախագահ երկրների նախագահների կողմից, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքների վերադարձը Ադրբեջանի վերահսկողության ներքո, Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր կարգավիճակը՝ անվտանգության և ինքնակառավարման երաշխիքների ապահովմամբ, Հայաստանը Լեռնային Ղարաբաղի հետ կապող միջանցքը, Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի ապագա սահմանումը՝ իրավական ուժ ունեցող կամարտահայտության միջոցով, բոլոր տեղահանված անձանց և փախստականների վերադարձի իրավունքն իրենց բնակության նախկին վայրեր, անվտանգության միջազգային երաշխիքները, որոնք ներառելու են խաղաղապահ գործողություն»[17]:

Պահպանելով դիվանագիտական տոնը՝ համանախագահները, առանց հասցեատիրոջն ուղիղ մատնանշելու, զգուշացրել են իրենց առաջարկներին չհամապատասխանող հայտարարությունների վերաբերյալ, սակայն Ռուսաստանի արտգործնախարար Ս. Լավրովի պարզաբանումները՝ իրադարձությունների ընթացքի վերաբերյալ, միանշանակորեն վկայում են, որ այդ հայտարարության հիմնական հասցեատերը ՀՀ իշխանություններն էին, որոնք ձգտում էին «փոխել բանակցային տրամաբանությունը» այնպիսի «մոտեցումներով», որոնք ինքնին զուրկ են որևէ սկզբունքից ու տրամաբանությունից, հակասում են ինչպես միջազգային իրավունքի սկզբունքներին, այնպես էլ հակամարտությունների կարգավորման պրակտիկային:

[17] Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group on the Upcoming Meeting of President Aliyev and Prime Minister Pashinyan, Moscow, Paris, Washington, 9 March 2019, www.osce.org\minskgroup\413813

Դրանցից առաջինը Ս. Լավրովը հրապարակայնորեն բարձրաձայնեց 2020թ. ապրիլի 21-ին՝ Գորչակովի անվան հանրային դիվանագիտության աջակցության ակումբում տեղի ունեցած կլոր սեղանի մասնակիցների հետ հանդիպման ժամանակ: Մասնակիցներից մեկի հարցին ՌԴ արտգործնախարար Ս. Լավրովի պատասխանի հետևյալ հատվածը իրարանցում առաջացրեց հայաստանյան քաղաքական և մերձքաղաքական շրջանակներում. «...Կան «Մադրիդյան սկզբունքները», ինչպես նաև փաստաթղթեր, որոնք պատրաստվել են 2010-2011թթ. Ռուսաստանի Դաշնության կողմից՝ այսպես կոչված «Կազանյան փաստաթուղթը»: Կան նախագծեր, որոնք տարածվել են մեկ տարի առաջ (անցած տարվա ապրիլին) Մոսկվայում, Ռուսաստանի, Հայաստանի, Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպման ժամանակ, որին մասնակցում էին համանախագահները: Դրանք այսօր ակտիվորեն քննարկվում են: Այդ փաստաթղթերը ենթադրում են շարժում դեպի կարգավորում՝ փուլային մոտեցման հիման վրա, առաջին փուլում նախատեսելով առավել արդիական խնդիրների լուծում՝ Լեռնային Ղարաբաղի հարակից մի շարք շրջանների ազատում և տրանսպորտային, տնտեսական և այլ հաղորդակցության ուղիների ապաշրջափակում»[18]:

Հայաստանի արտգործնախարարը երեսպաշտորեն հայտարարեց, որ 2014թ. տարբերակը չի քննարկվում, այդ գերատեսչության մամուլի խոսնակն էլ ասաց, որ բանակցային սեղանին փուլային տարբերակ չկա: Նորից՝ կեղծիք (Լավրովը 2014թ. առաջարկների մասին չէր խոսել) և սուտ: Խնդիրը վերաբերում էր ոչ թե կարգավորման փուլային բնույթին, այլ մեկ փաթեթով սահմանված կարգավորման ողջ ընթացակարգը երկու փուլով իրականացնելուն:

Որ վերոհիշյալ տարբերակն օրակարգում էր մնում ագրեսիայից մի քանի օր առաջ, վկայում են անգամ թուրքական աղբյուրները: «Միլիյեթ» պարբերականում 2020թ. հոկտեմբերի 12-ին տպագրված «Մոսկվայի ռազմավարությունը» հոդվածում[19] Դ. Քիլիսլիօղլուն նշում է, որ սեպտեմբերին Մոսկվա այցելած Ադրբեջանի խորհրդարանի նախագահի հետ հանդիպման ժամանակ Ռուսաստանի արտգործնախարարն ասել է, որ քննարկվում է յոթ շրջաններից հինգը Ադրբեջանին

[18] Выступление и ответы на вопросы Министра иностранных дел Российской Федерации С.В.Лаврова в рамках заседания круглого стола с участниками Клуба поддержки публичной дипломатии им. А.М.Горчакова в формате видеоконференции, Москва, 21 апреля 2020 года, https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4103828

[19] D. Kilislioğlu, Moskovanin stratejisi, *Milliyet,* 12.10.2020, https:\www.milliyet.com.tr\yazarlar\deniz-kilislioglu\moskovanin-stratejisi-6327070

վերադարձնելու և Շուշի-Լաչին միջանցքում ռուսական խաղաղապահների տեղադրման հարցը:

Լավրովի հաջորդ հրապարակային գնահատականը հնչեց արդեն պատերազմի ընթացքում՝ 2020թ. հոկտեմբերի 14-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ. «Իհարկե, քաղաքական կարգավորումը հնարավոր է: Առաջարկները, որոնք մշակել են և շարունակում են մշակել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, մնում են բանակցային սեղանին: Դրանց բովանդակությունը հայտնի է. դա Լեռնային Ղարաբաղի շրջակա շրջանների փուլային, աստիճանական ազատումն է՝ պահպանելով նրա անվտանգության երաշխիքները և ապահովելով Հայաստանի և Ղարաբաղի հուսալի կապ մինչև կորոշվի նրա վերջնական կարգավիճակը: Այդ սխեման լավ հայտնի է... Այդ տխուր իրադարձությունները պետք է օգնեն ակտիվացնել քաղաքական գործընթացները՝ «գետնի վրա» անվտանգության հարցերը լուծելուն զուգահեռ:

Բոլոր պայմանավորվածությունները, որոնք վերջին շրջանում քննարկվել են և լրջորեն ընկալել են կողմերը, ենթադրում էին առաջին փուլում հինգ շրջանների ազատում՝ պահպանելով երկու շրջանները երկրորդ փուլի համար, որի համար թողնվում էր նաև Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հարցը: Առաջին փուլում, բացի հինգ շրջանների ազատումից, պետք է բացվեին բոլոր հաղորդակցությունները, տնտեսական կապերը, տրանսպորտային շփումները, պետք է տեղակայվեին խաղաղապահներ, որոնք կերաշխավորեին ռազմական գործողությունների չվերսկսում: Այդ մեխանիզմը հիմա պետք է գործի շփման փաստացի գծի երկայնքով: Դա արդեն հինգ շրջանները չեն, որոնց փոխանցումն առաջարկում էին համանախագահները»[20]:

Ինչպես երևում է, անգամ հոկտեմբերի 14-ին բոլոր պայմանավորվածությունները, այդ թվում՝ նաև երկրորդ փուլում հայտնի մեխանիզմով կարգավիճակի որոշման մեխանիզմը, որի մասին գրել է Ի. Պոպովը, ուժի մեջ են եղել: Բացառությունը, ինչպես նշում է Լավրովը, եղել է միայն հարակից շրջանների այն տարածքների վերաբերյալ, որոնք արդեն գտնվում էին Ադրբեջանի վերահսկողության ներքո. բաժանիչ գիծն արդեն պետք է անցներ ըստ դրա: Ինչո՞ւ ՀՀ և ԼՂՀ ղեկավարները չէին համաձայնում դրան՝ շարունակելով նահանջը, տալով հազարավոր զոհեր ու վիրավորներ: Գուցե իսկապե՞ս «հակառակը տարածքների

[20] Интервью Министра иностранных дел Российской Федерации С.В.Лаврова радиостанциям «Sputnik», «Комсомольская правда» и «Говорит Москва», Москва, 14 октября 2020 года, https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4381977

հանձնումն է՝ ըստ էության ոչնչի դիմաց»[21], ինչպես իր հոդվածում պնդում է Փաշինյանը: Տարրական գիտելիքներ ունեցող յուրաքանչյուրի համար ակնհայտ է, որ՝ ոչ: Այլընտրանքը ոչ միայն ծանր մարդկային ու նյութական կորուստների դադարեցումն էր, հինգ շրջանների վերադարձի ողջամիտ հաջորդականության ու ժամանակացույցի հաստատումը, երկրորդ փուլում Արցախի կարգավիճակի որոշումն ըստ Ի. Պոպովի նշած սխեմայի, Քելբաջարի ու Լաչինի շրջանների զգալի հատվածները Հայաստանն ու Արցախը կապող միջանցքի մեջ ընդգրկելու համար՝ որպես փոխհատուցում Մարտակերտի, Մարտունու և Շահումյանի շրջանների այն հատվածների, որոնք գտնվում են Ադրբեջանի վերահսկողության ներքո: Իր հոդվածում Փաշինյանը հռետորական հարց է տալիս. «Ինչո՞ւ պիտի Ադրբեջանը 2018 կամ 20 թվականին համաձայներ նրան, ինչի հետ կտրականապես համաձայն չէր 2011-ին, երբ Կազանում հրաժարվեց ստորագրել ԱԳ նախարարների մակարդակով համաձայնեցված փաստաթուղթը: Այն ժամանակ, հիշեցնեմ, Ադրբեջանը շատ ավելի քիչ էր պատրաստ պատերազմին»[22]: Նախ, պատերազմ սկսելու համար պատրաստ լինելն ընդամենը մեկ գործոնն է: Չափազանց կարևոր է, թե արդյո՞ք արտաքին և ներքին իրավիճակները նպաստավոր են դրա համար: Ահա թե ինչպես էր գնահատում իրավիճակը արտաքին հարաբերություններում Ի. Ալիևը 2016թ. քառօրյա պատերազմից հետո. «Մեզ վրա ճնշումներ են գործադրվում՝ ստիպելու համար, որ մենք համաձայնենք ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Մենք շատ մանրամասներ չենք բացահայտում, քանի որ կան դիվանագիտության կանոններ: Բայց Ադրբեջանի սևացմանն ուղղված Արևմուտքի, տարբեր ոչ կառավարական կազմակերպությունների և երկրի ներսում «հինգերորդ շարասյան» արշավի հիմքում ընկած է ճնշումը՝ նպատակ ունենալով ստանալ Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման համաձայնություն»[23]: Ավելին, ստորև կբերվի Լավրովի վկայությունը, թե ով էր պատրաստ իրագործել համանախագահների առաջարկները, ով՝ ոչ: Ինչպես հայտնի է, ցանկացած սուտ, կեղծիք ու աճպարարություն որոշ ժամանակ անց բացահայտվում է: Քանի որ 2018թ. իշխանափոխությունից հետո համանախագահները, ինչպես միջնորդները սովորաբար վարվում են, մոտ մեկ տարի սպասում էին Հայաստանի նոր իշխանությունների հարմարվելուն իրենց

[21] Ն. Փաշինյան, նշված աշխատանքը , https:\www.primeminister.am\hy\interviews-and-press-conferences\item\2021\01\04\NikolPashinyan-04-01\

[22] Նույն տեղում:

[23] И. Алиев, Азербайджан пытаются заставить признать независимость Карабаха, https:\eadaily.com\ru\news\2016\10\07\aliev-azerbaydzhan-pytayutsya-zastavit-priznat-nezavisimostkarabaha

պարտականություններին, կարգավիճակին ու բանակցային գործընթացին, ՀՀ իշխանությունները հավանաբար կարծում էին, որ հաջողվել է նրանց մոլորեցնել իրենց «մոտեցումներով»: Նրանք երևի չէին հասկացել, որ եթե Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի՝ անկախության ճանաչման միակ հիմքը ինքնորոշման իրավունքի իրացումն է, ապա միջազգային իրավունքի մյուս նորմերի հիման վրա այդ հինգ շրջանները պետք է վերադարձվեին՝ կարգավորման գործընթացի մյուս քայլերին համահունչ: Այդ ճանապարհով գնալու համար անհրաժեշտ կլիներ դրսևորել խիզախություն, վճռականություն, խմբակային քաղաքական շահերը հայրենիքի երկու հատվածների անկախությանն, ազատությանն ու անվտանգությանը ստորադասելու կամք, անհրաժեշտ գիտելիքներ և հմտություն՝ այդ ճանապարհը հաջողությամբ անցնելու համար: Իսկ դրա հակառակն այն էր, ինչը ստացվեց նոյեմբերի 10-ին:

Ավելի ուշ, 2020թ. նոյեմբերի 12-ին տեղի ունեցած հարցազրույցի ժամանակ Ս. Լավրովը մանրամասնորեն ներկայացրել է վերջին շրջանում իրադարձությունների զարգացման ընթացքը՝ աներկբա բացահայտելով, որ ՀՀ իշխանություններն են ձախողել բանակցությունները.

«Հակամարտության ներկայիս փուլը սկսվեց այն բանից հետո, երբ բավական տևական ժամանակի ընթացքում կուտակվում էին ծայրահեղ հուզական, ագրեսիվ, դիմակայության տանող հայտարարություններ: ***Մենք կնախընտրեինք, որ ամբողջ հակամարտությունը վաղուց լուծված լիներ այն սկզբունքների հիման վրա, որոնք մշակել են Մինսկի խմբի համանախագահները: Դրանց մասին վերջին շրջանում մեկ անգամ չէ, որ խոսել է Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը, ընդգծելով իր պատրաստակամությունն այդ սկզբունքների հիման վրա կատարելու այն, ինչ առաջարկում էին համանախագահները: Եթե մենք գնայինք այդ ճանապարհով, ապա արդյունքը հավանաբար կլիներ նույնպիսին՝ հինգ, ապա նաև երկու շրջանների ազատման տեսակետից: Բայց, նախ դա կարվեր անարյուն, ապա դա կարվեր վերջնական քաղաքական կարգավորման հետ կապակցված»*** (ընդգծումն իմն է - Տ.Թ.):

Այս հատվածը միանշանակորեն ցույց է տալիս, որ Ալիևը պատրաստ էր կատարելու համանախագահների առաջարկները, հետևաբար դրան խոչընդոտում էր Փաշինյանը՝ իր վերոհիշյալ «մոտեցումներով»:

Այդ խաղաղ առաջարկություններն ու քաղաքական-դիվանագիտական քայլերը, որոնք առաջարկվում էին և ինչ-որ փուլում բոլորը համաձայն էին, կասկածի տակ դրվեցին վերջին ոչ տևական շրջանում: Ասվում էր, որ հինգ, ապա երկու շրջանների վերադարձման ճանապարհով գնալու դեպքում հնարավոր չի լինի ապահովել հուսալի անվտանգություն: Երկու կողմերից սկսեցին կուտակվել բավական հուզական, կոշտ,

ագրեսիվ արտահայտություններ: Մթնոլորտը շիկանում էր: Միջադեպեր առաջացան Հայաստանի ու Ադրբեջանի սահմաններին: Դրանք բավական արագ հաջողվեց խլացնել, բայց արագ հանգուցալուծման ցանկությունը «կախված էր օդում»:

Ջանքեր գործադրեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, որոնք հանդես եկան համապատասխան կոչերով, ապա հայտարարություններ ընդունվեցին Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի արտգործնախարարների մակարդակով, որոնք հետագայում հաստատվեցին նոր փաստաթղթերում, որոնք արդեն նախաձեռնել էին ֆրանսիացիները, ապա ամերիկացիները՝ որպես համանախագահության մեր կոլեգաներ: Դրանից ոչ մի բան չգործեց և չհանգեցրեց արյունահեղության իրական դադարեցման, քանի որ այդ բոլոր դեպքերում չստեղծվեց կրակի դադարեցման մեխանիզմ, ինչի կոչ էին անում համանախագահները:

...Երևանում, անկասկած, կան անկեղծ մարդիկ, ում համար ցավալի է, որ ամեն բան այս փուլում այդպես է ավարտվում: Սակայն պատրանքներ, որ Լեռնային Ղարաբաղի հարակից յոթ շրջանները հավերժ պետք է մնան այն վիճակում, որը կար մեկուկես-երկու ամիս առաջ, չպետք է լինեն:

Համարում եմ, որ պատասխանատու իշխանությունները պարտավոր էին բնակչությանը բացատրել, որ որևէ փուլում այդ հակամարտությունը հարկ է լուծել ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկներին համապատասխան: Այդ սկզբունքները երկար տարիներ «սեղանին են»: Դրանք իդեալական ուղի էին բացում դեպի կարգավորում առանց արյունահեղության և առանց այդ տարածաշրջանում որևէ մեկի, նախ՝ ղարաբաղյան հայերի և Ղարաբաղում ապրող մյուս էթնիկ խմբերի, տարածաշրջանի երկրների՝ Հայաստանի ու Ադրբեջանի անվտանգությունը վնասելու»[24]:

Մեջբերումը ծավալուն է, սակայն այս դեպքում այն արդարացված և պարտադրված է, քանի որ հանգեցնում է անվերապահ հետևության. բացարձակ պատկերացում չունենալով հակամարտությունների, դրանց լուծման սկզբունքների ու ձևերի մասին, չընկալելով բանակցային գործընթացի ու հնարավոր լուծումների էությունը, չհասկանալով, որ համանխագահների 11 տարվա աշխատանքի նկատմամբ նման անհարգալից վերաբերմունքը հղի է ծանր հետևանքներով՝ երկուսուկես տարի ՀՀ իշխանությունները, ԼՂՀ իշխանությունների հլու-հնազանդությամբ, փորձել են «փոխել բանակցային տրամաբանությունը»՝ առաջարկելով տգետ, անիմաստ,

[24] Интервью Министра иностранных дел Российской Федерации С.В.Лаврова российским и иностранным СМИ по актуальным вопросам международной повестки дня, Москва, 12 ноября 2020 года, https:\www.mid.ru\ru\foreign_policy\news\-\asset_publisher\cKNonkJE02Bw\content/id/4429844

անհիմն ու ծայրահեղ վտանգավոր «մոտեցումներ»: Դա տապալել է բանակցությունները և Ադրբեջանը պատրվակ է ստացել պատերազմ սկսելու համար:

Հայաստանի իշխանությունների քաղաքականության կոպիտ սխալներն ու բացահայտ ձախողումները տեսանելի էին ոչ միայն համանախագահների համար: Դրանք ամենակոշտ գնահատականների են արժանացել միջազգային ասպարեզում: Ընդամենը մի քանի օրինակ.

Ֆրանսիական «Լը Մոնդը» գրել է.

«Ալիևը կարողացավ օգտվել հայկական իշխանությունների թույլ տված ողբերգական սխալներից. մասնավորապես, 2020-ի հուլիսին, երբ երկրի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Շուշիում ասաց. «Ղարաբաղը Հայաստան է և վերջ»[25]:

Ամերիկյան «The Ware on the Rocks»-ի գնահատականներն ավելի կոշտ են.

«Հայաստանի պետական կառավարումը իրեն դրսևորել է որպես զառանցանքային ինքնավստահության ու նաիվ հուզականության խառնուրդ:

Հաշվի առնելով երկրի սահմանափակ ռեսուրսները՝ Ռուսաստանից ռազմական և տնտեսական կախվածությունը և աճող սպառնալիքը ավելի լավ զինված և ավելի ու ավելի հիասթափվող Ադրբեջանից, Հայաստանը քաղաքական և տնտեսական դժվարություններից դուրս բերելու համար պահանջվում էր քաղաքական խորաթափանցություն և հնարամտություն, որակներ, որոնք Փաշինյանը չունի:

Հաշվի առնելով արտաքին քաղաքական հարցերում Փաշինյանի անհետևողականությունն ու խառնաշփոթը, միանգամայն հնարավոր է, որ իրականում նա չէր վարում հանուն Արևմուտքի Ռուսաստանից անջատվելու քաղաքականություն:

Թշնամանալով Ռուսաստանի հետ՝ Փաշինյանը և իր կաբինետը ընկան մաքսիմալիստական նկրտումների գիրկը: 2019թ. մարտին Հայաստանի պաշտպանության նախարար Դ. Տոնոյանը հայտարարեց, որ Հայաստանի քաղաքականությունը արդեն ոչ թե «հող խաղաղության դիմաց» է, այլ «պատերազմ հանուն նոր տարածքների»՝ եթե Ադրբեջանը համարձակվի պատերազմ սկսել, Հայաստանը կգրավի ավելի մեծ ադրբեջանական տարածքներ:

Փաշինյանը կրկնապատկեց մաքսիմալիզմը, երբ 2019թ. օգոստոսին Ստեփանակերտում հայտարարեց. «Արցախը Հայաստան է և վերջ»: Ձգտելով գերազանցել քաղաքական մրցակիցներին Հայաստանում և Ղարաբաղում՝

[25] P. Tavignot, Aliyev a pu profiter des erreurs tragiques commises par les autorités arméniennes, *Le monde,* 22.01.2021, https://www.lemonde.fr/international/article/2021/01/22/en-azerbaidjan-l-autocrate-aliev-rendu-populaire-par-la-guerre_6067228_3210.html

հնարավոր է, նա միասնության կոչ էր անում, բայց դա հրդեհածին հայտարարություն էր: Դա համարժեք էր Ադրբեջանի բացարձակ մերժմանը և, հետևաբար, հրաժարում բանակցությունների գաղափարից:

Մեկ տարի անց, Սևրի դաշնագրի հարյուրամյակի կապակցությամբ իր ելույթում Փաշինյանը ամբողջությամբ հրաժարվեց տրամաբանությունից և ողջամտությունից, հայտարարելով, որ պայմանագիրը «պատմական փաստ է» և «այսօր էլ մնում է այդպիսին»:

Փաշինյանի ընդդիմությունն իր ցասումը չկենտրոնացրեց նրա լկտի դիվանագիտական և ռազմավարական խելահեղության վրա, որը Հայաստանին հանգեցրեց աղետալի և անխուսափելի պարտության»[26]:

Սևրի դաշնագրի հարյուրամյակին նվիրված ՀՀ նախագահի ու վարչապետի ելույթներին անդրադարձել է[27] նաև Հայաստանի առաջին նախագահի արտաքին քաղաքականության հարցերով խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը՝ մինչև պատերազմը: Նա այդ ելույթները համարժեք է համարել առնվազն «դիվանագիտական պատերազմ հայտարարելուն», միաժամանակ նշել, որ դրանով ղարաբաղյան խնդիրը ինքնորոշման հարցից վերափոխվեց ծավալապաշտական հարցի, ինչը ևս մեկ ահռելի սխալ է:

Գրեթե երեք տարի տգիտության, աճպարարության ու ստի վրա կառուցված «թավշյա» արտաքին քաղաքականության արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը երկիրը հասցրեց աղետի՝

-անհիմն, անհեթեթ ու տգետ «առաջարկություններով» ԼՂ հակամարտության կարգավորման ձախողում, ինչը պատրվակ դարձավ ադրբեջանաթուրքական ագրեսիայի համար,

-պատերազմի և կապիտուլյացիայի արդյունքում՝ հազարավոր զոհեր ու գերիներ, տասնյակ հազարավոր վիրավորներ,

-նյութական, բարոյահոգեբանական ահռելի կորուստներ,

-«Լեռնային Ղարաբաղի հարակից» բոլոր տարածքների կորուստ,

-Լեռնային Ղարաբաղի Ակերանի, Հադրութի, Մարտունու, Մարտակերտի շրջանների հատվածների, Շուշի և Հադրութ քաղաքների կորուստ,

---

[26] M. A. Reynolds, Confidence and Catastrophe: Armenia and the Second Nagorno-Karabakh War, *The Ware on the Rocks,* https://warontherocks.com/2021/01/confidence-and-catastrophe-armenia-and-the-second-nagorno-karabakh-war/

[27] Ժ. Լիպարիտյան, *Առավոտ օրաթերթ, 01.09.2020*, Քայլ, այս անգամ՝ մեծ քայլ դեպի ետ, https:\www.aravot.am\2020\09\01\1132491\

-հայկական բանակի ջախջախում,

-Հայաստանի Հանրապետության մի շարք սահմանամերձ տարածքների վերածևում՝ ի նպաստ Ադրբեջանի,

-դաշնակից պետությունների հետ հարաբերությունների կտրուկ վատթարացում և անհուսալի ու անպատասխանատու գործընկերոջ համբավի վաստակում:

Մինչդեռ, եթե անգամ անվերապահորեն կատարվեին ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում մինչև 2018թ. համանախագահների առաջարկությունները, ապա միայն հինգ շրջանների վերադարձով կարելի էր պահպանել Քարվաճառի և Քաշաթաղի շրջանները և դրանց խնդրի հետ կապված լուծումներին անդրադառնալ միայն ԼՂՀ վերջնական իրավական կարգավիճակի որոշումից հետո, որը պետք է իրականացվեր ԼՂ ժողովրդի կամքի ազատ արտահայտմամբ՝ չխախտելով 1988թ. եղած ժողովրդագրական համամասնությունը (ինչը համարժեք է ԼՂՀ անկախության ճանաչմանը): Ակնհայտ է, որ այդ դեպքում չէին լինի հազարավոր զոհեր, գերիներ, վիրավորներ, տեղահանված ու ամեն ինչ կորցրած մարդկանց ողբերգություն, ջախջախված բանակ, նյութական ու բարոյահոգեբանական ահռելի կորուստներ:

Այլ դեպքում երկիրը լիակատար աղետի հասցրած քաղաքական ղեկավարությունն առնվազն կապիտուլյացիայից անմիջապես հետո հրաժարականներ կներկայացներ, ինչպես եղել է բազմաթիվ պետություններում՝ բազմաթիվ անգամներ: Սակայն Հայաստանում շարունակվում է պետության քայքայումն ու հեղինակազրկումը, տգիտության, ստի ու աճպարարության ամենօրյա անբարո խրախճանքը:

Մինչդեռ Մինսկի խմբի համանախագահները վերսկսել են ԼՂ հակամարտության կարգավորման աշխատանքները՝ ձևավորելու համար հակամարտության կարգավորման օրակարգը: Նախ 2020թ. դեկտեմբերի 14-ին այցելել են[28] տարածաշրջան, ապա փետրվարի 16-ին մոտեցումների ճշգրտման նպատակով հեռավար քննարկումներ[29] են ունեցել Հայաստանի ու Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հետ: Բայց մի՞թե Հայաստանի արտաքին գործերի նախարարը կարող է ներկայացնել հայկական կողմերի շահերը, երբ ոչ միայն պատկերացում չունի միջազգային իրավունքի, ինքնորոշման իրավունքի էության և կիրառման պրակտիկայի, հակամարտությունների կարգավորման մասին, այլև ռուս համանախագահին կարող է վերագրել հետևյալ անհեթեթությունը. «Ես

[28] Statement of the OSCE Minsk Group Co-Chairs, https:\www.osce.org\minsk-group\473649

[29] Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, https://www.osce.org/minsk-group/478690

միանշանակ համամիտ եմ պարոն Պոպովի հետ, որ ***Արցախի կարգավիճակը եղել է հակամարտության կարևորագույն սկզբունքը***:

Վարչապետն ասել է այն, ինչ ասել է, և Պոպովը մեկնաբանել է: Խնդրում եմ ուշադիր կարդացեք, թե ինչ է գրել վարչապետը, և ինչ է ասել Պոպովը»[30]:

Մի՞թե հնարավոր է պատկերացնել, որ արտաքին գործերի նախարարը չի հասկանում՝ «կարգավիճակ» և «սկզբունք» բառերի իմաստը: Կամ կարող է հայտարարել, որ «այլևս Թուրքիան որևէ պատճառ չունի Հայաստանի ուղղությամբ սահմանը փակ պահելու համար»[31], չհասկանալով, որ մի կողմից արդարացնում է Անկարայի շրջափակման քաղաքականությունը՝ չտարբերելով «պատճառ» ու «պատրվակ» բառերի իմաստը, իսկ մյուս կողմից ջուր է լցնում Ալիևի ջրաղացին, որն ասում է, որ ԼՂ հակամարտությունը լուծված է:

Իսկ ինչպե՞ս կարող է մեկը հրապարակավ հայտարարել[32], որ «Իսկանդերը» չի պայթել կամ 10 տոկոսով է պայթել՝ վարկաբեկելով Լեռնային Ղարաբաղում խաղաղապահներ տեղակայած դաշնակից երկրի տրամադրած ժամանակակից զինատեսակը, դառնալով ծաղրուծանակի առարկա ոչ միայն Ռուսաստանում, այլև թե՛ Հայաստանի զինված ուժերի, թե՛ պաշտպանության նախարարության կողմից, ապա բանակցություններ վարել Լեռնային Ղարաբաղի ճակատագրի վերաբերյալ կամ պաշտպանել Հայաստանի շահերը:

Նման ընթացքը հղի է նոր աղետներով՝ ինչպես Հայաստանի պետականության, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի համար, ինչը առանձին անդրադարձի առարկա է:

---

[30] Արդյոք իրար հակասում են Փաշինյանի հոդվածն ու Իգոր Պոպովի հարցազրույցում նշված պնդումները. ԱԳ նախարարի մեկնաբանությունը, https://news.am/arm/news/623517.html

[31]https://news.am/arm/news/628079.html

[32] https://news.am/arm/news/630304.html

2. ԿԱՊԻՏՈՒԼՅԱՑԻԱՅԻՑ ՀԵՏՈ. ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Կառլ ֆոն Կլաուզևիցի հայտնի ձևակերպումը՝ «պատերազմի արդյունքը դեռևս վերջնական չէ»[33], միանգամայն տեղին է նաև 2020թ. Արցախյան պատերազմի դեպքում, թեև տեղի ունեցած աղետը և դրա հետևանքները դեռևս խորապես չեն ընկալվել: Անհրաժեշտ է իրատեսորեն գնահատել ստեղծված իրավիճակը և պլանավորել ու իրագործել դրա հաղթահարման բազմագործոն և բազմավեկտոր ծրագիր: Իրավիճակի բարդությունը պայմանավորված է ինչպես ձևավորվող աշխարհակարգի[34] անկայուն հավասարակշռությամբ, այնպես էլ ռուս-թուրքական հարաբերությունների երկակի՝ մրցակցային-համագործակցային բնույթով[35]: Ե՛վ Ռուսաստանը, և՛ Թուրքիան Արևմուտքի հետ բարդ հարաբերությունների և առկա ու հնարավոր պատժամիջոցների պատճառով ստիպված են համակերպվել համագործակցությանը, որը համապատասխան նախադրյալների կամ անզգույշ քայլերի դեպքում կարող է վերածվել դիմակայության թե՛ Հարավային Կովկասում, թե՛ Սիրիայում: Դրան կարող են մղել ինչպես հարաբերական հաջողությունները, այնպես էլ Արևմուտքի դերակատարությունը մեծացնելուն ուղղված քայլերը, ինչը նվազել էր, մասնավորապես, Միացյալ Նահանգներում նախագահական ընտրությունների շրջանի ազդեցությամբ: Ստորև փորձ կարվի սեղմ ձևակերպել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի վրա ազդող գործոններով պայմանավորված իրավիճակի գնահատականները և անելիքների ուղղությունները:

2.1. Հակամարտության կարգավորման գործընթացի նոր փուլը

Այն բանից հետո, երբ Հայաստանի վարչապետը նոյեմբերի 9-ին ստորագրեց կապիտուլյացիայի հայտարարությունը, Ադրբեջանն ու Թուրքիան հայտնվեցին էյֆորիայի մեջ և հայտարարեցին, որ փակված է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման էջը: Սակայն, կարճ ժամանակ անց հնչեցին լուրջ

---

[33] Some Juicy quotations from Clausewitz on war, https:\www.clausewitz.com\readings\Cquotations.html

[34] Տ. Թորոսյան, Ա. Վարդանյան, Եվրասիական կենտրոնի մեծ աշխարհաքաղաքական վերաբեռնավորման ավարտը, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2020, 1, էջ 5-52;

[35] Տ. Թորոսյան, Գ. Արշակյան, Ռուս-թուրքական մրցակցությո՞ւն, թե՞ համագործակցություն, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2016, 1(5), էջ 5-34:

հարցադրումներ հետագա զարգացումների վերաբերյալ: Միացյալ Նահանգները[36], Ֆրանսիան[37], մի շարք այլ երկրներ, Եվրոպական միության[38] ու այլ միջազգային կազմակերպություններ, միաձայն ողջունելով Ռուսաստանի ջանքերը ռազմական գործողությունների դադարեցման ուղղությամբ, հայտարարեցին, որ հակամարտությունը դեռևս կարգավորված չէ, մի շարք հարցեր, այդ թվում՝ նաև Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը, դեռևս պետք է վճռվեն, և դա պետք է արվի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ձևաչափով:

Արագ արձագանքեցին նաև փորձագետները: ԵԱՀԿ Մինսկի խմբի նախկին ամերիկյան համանախագահ Քերի Քավանո. «Ալիևը գործում է այնպես, կարծես հակամարտությունը լուծված է: Դա այդպես չէ, քանի որ առանցքային խնդիրները մնում են չլուծված: Անհրաժեշտ է համապարփակ կարգավորում՝ կայուն խաղաղության և բարգավաճման հիմք ստեղծելու համար»[39]: Հեղինակավոր Foreign Policy–ն արդեն նոյեմբերի 25-ին գրում էր, որ «այդ գործարքը կնքելով՝ Մոսկվան ստանձնեց դրա պատասխանատվությունը, թեև ըստ դրա պայմանների՝ կարող է ներգրավել և այլ կողմեր՝ ԵԱՀԿ-ից մինչև ՄԱԿ, արևմտյան մայրաքաղաքներ և այլ միջազգային կազմակերպություններ» և ավելացնում, որ ըստ Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Քեննի Գլյուկի (Kenny Gluck), որը ավագ բանակցողներից մեկն է եղել Դարֆուրում, Եմենում և Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետությունում, «կա քաղաքական բնույթի ավելի երկարաժամկետ խնդիր: Այժմ ամենակարևորն այնպիսի մեխանիզմների գործարկումն է, որոնք դուրս են գալիս կրակի

[36] United State welcomes cessation of hostilities between rmeni ans Azerbaijn and announces new assistance to respond to the Nagono Krabakh humanitarian Emergency, https:\www.state.gov\the-united-states-welcomes-cessation-of-hostilities-between-armenia-and-azerbaijan-and-announces-new-assistance-to-respond-to-the-nagorno-karabakh-humanitarian-emergency\25.11.2020.

[37] Haut-Karabagh – Déclaration de Jean-Yves Le Drian, ministre de l'Europe et des Affaires étrangères (10.11.2020), https://www.diplomatie.gouv.fr/fr/dossiers-pays/azerbaidjan/evenements/article/haut-karabagh-declaration-de-jean-yves-le-drian-ministre-de-l-europe-et-des, 17.11.2020.

[38] Nagorno-Karabakh: Declaration by the High Representative on behalf of the European Union, 19.11.2020, https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2020/11/19/nagorno-karabakh-declaration-by-the-high-representative-on-behalf-of-the-european-union/

[39] Ք. Քավանոյի թվիթերյան էջ, https:\twitter.com\carey_cavanaugh\status\1349563079412101122?ref_src=twsrc^tfw, 14.01.2021

դադարեցման շրջանակներից և նպատակաուղղված են երկարաժամկետ քաղաքական լեգիտիմությանը: Դա հեշտ խնդիր չէ, և որպեսզի դա չի լինի լուծել»[40]:

Ադրբեջանական շահերը պաշտպանողները դրան հակադրվելու թույլ փորձեր են անում՝ մատնանշելով նոյեմբերի 9-ի հայտարարության մեջ կարգավիճակի կամ այդ շարքի մի շարք այլ հարցերի բացակայությունը: Սակայն, անգամ թուրքական պարբերականները պնդում են, որ շատ հարցեր դեռ պետք է որոշվեն. «Մեկնարկում է վճռական գործընթաց, որը կորոշի՝ հինգ տարի ընդգրկող կրակի դադարեցման համաձայնությունը կդառնա՞ արդյոք մշտական և վերջնական համաձայնություն... Բացի այդ, կա նաև Նախիջևանի միջանցքի հարցը: Պետք է հաշվի առնել, որ այդ միջանցքի ռուսական վերահսկողության հնարավոր մերժումը կազդի նաև այդ միջանցքի ստեղծման գործընթացի վրա: Համաձայնության իրականացման այդ երկրորդ փուլում Լեռնային Ղարաբաղում անորոշության և չկարգավորվածության պահպանումը կարող է Հայաստանի ատելությունն ու թշնամանքը բորբոքել: Իսկ միջնաժամկետ հեռանկարում կառաջանա հավանականություն, որ հայերը այդ խաղաղության հաստատումը կդարձնեն ժամանակ շահելու միջոց նոր հակառազմավարության համար»[41]:

Եվ «շուտով պարզվեց, որ հիշատակման բացակայությունը նաև հակառակ երես ունի՝ եթե (մի շարք հարցերի վերաբերյալ) նոր կանոնները ոչ մի տեղ արձանագրված չեն, ապա այդ հարցերի հետ կապված ամեն ինչ մնում է այնպես, ինչպես եղել է: Ինքնահռչակ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանները փոխվել են, բայց այն շարունակում է գոյություն ունենալ, իսկ նրա հետ պահպանվել են հակամարտության նոր շրջապտույտի բազմաթիվ հնարավորություններ» [42] : Այդ առումով բացառիկ նշանակություն ունի դեկտեմբերի 3-ին Տիրանայում Մինսկի խմբի համանախագահող երկրների պատվիրակությունների ղեկավարների՝ Ռուսաստանի արտգործնախարար Ս. Լավրովի, ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ս. Բիգունի և Ֆրանսիայի արտաքին գործերի և Եվրոպայի նախարար Ժ.-Ի. լը Դրիանի համատեղ հայտարարությունը, որով նրանք ողջունել են ռազմական գործողությունների դադարեցումը Լեռնային Ղարաբաղի հակամարտության շրջանում՝ նոյեմբերի 9-ի հայտարարությանը համապատասխան: Միաժամանակ.

---

[40] J. Losh, Russian Troops in Nagorno-Karabakh 'Clearly a Win for Moscow', *Foreign Policy*, 25.11.2020, https:\foreignpolicy.com\2020\11\25\russian-troops-nagorno-karabakh-peackeepers-win-moscow-armenia-azerbaijan\

[41] K. Zorlu, Karabağ'da ikinci kritik aşamaya geçildi..., *Haberturk*, 07.01.2021, https://www.haberturk.com/yazarlar/prof-dr-kursad-zorlu/2928646-karabag-da-ikinci-kritik-asamaya-gecildi

[42] К. Кривошеев, Никаких статусов, кроме кво. Почему конфликт в Карабахе далек от завершения, https:\carnegie.ru\commentary\experts\1526 21.12.2020.

«Համանախագահ երկրները կոչ են անում Հայաստանին և Ադրբեջանին օգտագործել կրակի ներկայիս դադարեցումը համանախագահների հովանու ներքո ամուր և կայուն խաղաղ համաձայնության բանակցությունների համար: Նրանք կրկին հաստատում են իրենց հետևողական և միասնական դիրքորոշումը՝ հօգուտ հակամարտության էության բոլոր մնացած հիմնական հարցերի վերաբերյալ բանակցային, համընդգրկուն և կայուն կարգավորման՝ հիմնական սկզբունքների ու տարրերի համաձայն, որոնք լավ հայտնի են ինչպես Հայաստանին, այնպես էլ Ադրբեջանին»[43]:

Կարևոր է նաև Մինսկի խմբի համանախագահող երկրների կոչը Հայաստանին և Ադրբեջանին՝ ամբողջ ծավալով կատարելու նոյեմբերի 9-ի հայտարարությունից բխող պարտավորությունները Լեռնային Ղարաբաղի և հարակից շրջանների վերաբերյալ: Այս հայտարարությունը արձանագրում է, որ համանախագահող երկրներից Ֆրանսիան և Միացյալ Նահանգները շարունակում են պնդել իրենց դիրքորոշումը կարգավորման գործընթացը պատերազմի պատճառով ընդհատված կետից՝ երեք հիմնարար սկզբունքների և վեց տարրերի հիման վրա (սկզբունքներից մեկը ինքնորոշման իրավունքն է, իսկ տարրերից մեկը՝ Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշումը հանրաքվեի միջոցով, որի ցանկացած արդյունք բոլորը պետք է հարգեն) շարունակելու վերաբերյալ, իսկ Ռուսաստանը համամիտ է այդ մոտեցմանը և շարունակելու է միջնորդական առաքելությունը: Այդ մոտեցումը դեկտեմբերի 14-ի հայտարարությամբ հաստատեցին նաև համանախագահները. «Հղում անելով դեկտեմբերի 3-ին Տիրանայում կայացած Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարների ԵԱՀԿ նախարարական հայտարարությանը՝ համանախագահները կրկին հայտարարում են իրենց միասնական դիրքորոշման մասին՝ հանուն բոլոր մնացած էական հարցերի համապարփակ և կայուն կարգավորման»[44]:

Ինչ վերաբերում է վեց տարրերից մյուս հինգին, ապա դրանցից երկուսը կարիք ունեն խմբագրման՝ 2020թ. պատերազմի արդյունքների հիման վրա: Մասնավորապես, հարկ է խմբագրել Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքներին վերաբերող տարրը, քանի որ պատերազմից հետո Ադրբեջանի նախկին շրջանների բոլոր տարածքներն արդեն Ադրբեջանի վերահսկողության ներքո են: Ավելին,

[43] Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries, http://www.osce.org/minsk-group/472419, 3.12.2020.
[44] Statement of the OSCE Minsk Group Co-Chairs, https:\www.osce.org\minsk-group\473649, 14.02.2020.

Ադրբեջանի վերահսկողության տակ են հայտնվել Լեռնային Ղարաբաղի Հադրութի, Ասկերանի, Մարտունու և Շուշիի շրջանների տարածքներ, Շուշի և Հադրութ քաղաքները: Հետևաբար, ըստ հիմնարար սկզբունքների, այդ տարածքները Ադրբեջանը պետք է վերադարձնի Արցախին: Վերանայման ենթակա է նաև խաղաղապահներին վերաբերող տարրը, քանի որ նրանք արդեն տեղակայված են բաժանարար գծի ամբողջ երկայնքով: Փաստորեն, կարգավորման այն սխեման, որն առաջարկում էին համանախագահները, պատերազմից հետո որոշ կետերով իրագործված է և Լեռնային Ղարաբաղին վերոհիշյալ տարածքների վերադարձից հետո պետք է անցնել երկրորդ փուլի իրագործմանը, որի առանցքային խնդիրը Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշումն է: Քանի որ երրորդ համանախագահ երկրի ներկայացուցիչ Ս. Լավրովը, ինչպես նաև ռուս համանախագահ Ի. Պոպովը ևս ստորագրել են հայտարարությունները, կարելի է վստահաբար պնդել, որ կարգավորման այդ ընթացքը լիովին բխում է Մոսկվայի շահերից: Սակայն ակնհայտ է, որ այն կարող է իրականացվել, եթե Ֆրանսիան և Միացյալ Նահանգները ներկայացնող համանախագահները պահպանեն իրենց անսասան դիրքորոշումը կարգավիճակի որոշման վերաբերյալ, որպեսզի Մոսկվան, Անկարայի ու Բաքվի ճնշումների ներքո, չտրվի որոշ իրավիճակային հարցեր հայկական կողմի հաշվին լուծելու գայթակղությանը: Հետևաբար, առանցքային նշանակություն է ունենալու Հայաստանի դիրքորոշումը, որը պետք է լինի բավարար վճռական ու անհրաժեշտ չափով նուրբ ու հարգալից բոլոր համանախագահների նկատմամբ:

Հեշտ է ենթադրել, որ Ռուսաստանն այդ ճանապարհը կանցնի մեծ զգուշությամբ՝ իր ձեռքբերումները չկորցնելու ակնկալիքով: Դրանով է պայմանավորված Ռուսաստանի ներկայացուցիչների դիրքորոշումների հարափոփոխ բնույթը հրադադարի հաստատումից հետո:

2.2. Ռուսաստանի առանցքային դերակատարությունը

ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևավորումից ի վեր Ռուսաստանը Ղարաբաղյան խնդրի հետ կապված ունեցել է երկակի դերակատարություն՝ հանդես է եկել որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ՝ միջնորդական առաքելությամբ, և տարածաշրջանում առավել ազդեցիկ ուժերից մեկը (եթե ոչ ամենաազդեցիկը)՝ իր աշխարհաքաղաքական դերակատարմամբ ու հետաքրքրություններով: Առաջին դերակատարմամբ պաշտոնական Մոսկվան ակտիվորեն ներգրավված է եղել հակամարտության կարգավորման գործընթացում՝ համագործակցելով մյուս

համանախագահների՝ Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի հետ: Երկրորդ դերակատարմամբ Մոսկվան փորձել է մեծացնել իր ազդեցությունը տարածաշրջանում՝ հնարավորության դեպքում օգտագործելով նաև կարգավորման գործընթացը: Ընդհանուր առմամբ, մյուս համանախագահները երբեք չեն առարկել Ռուսաստանի այս երկակի դերակատարությանը՝ հավանաբար համարելով, որ Մոսկվան կոռեկտորեն է համադրում այդ դերակատարությունները: Ավելին, որոշ ժամանակահատված նրանք Ռուսաստանին վերապահել էին հատուկ առաքելություն՝ մնալով Մադրիդյան սկզբունքների շրջանակում, որի ընթացքում Ռուսաստանի նախագահն ակտիվ հանդիպումներ էր ունենում Հայաստանի ու Ադրբեջանի իր կոլեգաների հետ, փորձել առաջ մղել կարգավորման գործընթացը: Դրա արդյունքում առաջ եկավ Կազանյան փաստաթուղթը, որը, սակայն, այդպես էլ չստորագրվեց, թեև դարձավ ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքային փաստաթուղթ: Հետագայում էլ Մոսկվան փորձում էր կարգավորման նոր տարբերակներ առաջարկել՝ մնալով համանախագահների միասնական մոտեցման շրջանակներում: Քանի որ «Մադրիդյան սկզբունքները» նախատեսում են խաղաղապահ ուժերի տեղակայում շփման գծի երկայնքով, Ռուսաստանը երբեք չի թաքցրել, որ իր կարծիքով դա լավագույնս կարող են անել ռուսական ռազմական ստորաբաժանումները: Ի վերջո, նոյեմբերի 9-ի հրադադարի հաստատման հայտարարության հիման վրա ռուս խաղաղապահները տեղակայվեցին արցախա-ադրբեջանական շփման գծի երկայնքով՝ իրականացավ այս հակամարտության հետ կապված Մոսկվայի առավել կարևոր նպատակներից մեկը: Սակայն ակնհայտ է, որ թեև դա կարևոր գործոն է, այնուամենայնիվ, ինքնին չի լուծում տարածաշրջանում պաշտոնական Մոսկվայի բուն աշխարհաքաղաքական նպատակին հասնելու խնդիրը՝ Հարավային Կովկասում իր ներկայությունն ու ազդեցությունն անսասան դարձնելու ուղղությամբ: Ըստ նոյեմբերի 9-ի հայտարարության՝ ռուս խաղաղապահների առաքելությունը սահմանված է հինգ տարով և կարող է երկարաձգվել, եթե Հայաստանը կամ Ադրբեջանը այդ ժամկետը լրանալուց վեց ամիս առաջ չհայտարարի այդ առաքելության շարունակմանն իր անհամաձայնության մասին: Հետևաբար, Մոսկվայի խնդիրն է՝ կա՛մ հասնել այն բանին, որ այդ ընթացքում Հայաստանը կամ Ադրբեջանը չպահանջեն դադարեցնել խաղաղապահ առաքելությունը, կա՛մ ստեղծվի այնպիսի իրավիճակ, որ անվտանգության նկատառումներով հնարավոր լինի չդադարեցնել խաղաղապահ առաքելությունը: Պարզ է, որ անվտանգության խնդիրը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հայությանը: Ավելին, ռուս խաղաղապահների առաքելության պահպանումը միանշանակորեն կապված է Լեռնային Ղարաբաղի տեղահանված հայ բնակչության լիարժեք վերադարձի և տեղում մնալու վճռականության հետ: Լեռնային

Ղարաբաղից հայ բնակչության արտագաղթը անիմաստ կդարձնի խաղաղապահների առկայությունը: Անիմաստ կլիներ մի քանի տասնամյակ ձգտել Լեռնային Ղարաբաղում ռուս խաղաղապահների տեղակայմանը, եթե դրան հասնելուց կարճ ժամանակ անց նրանք պետք է հեռանան: Հետևաբար, ուրվագծվում է Լեռնային Ղարաբաղում Ռուսաստանի քաղաքականության հետևյալ հնարավոր երկփուլ սցենարը: Առաջին փուլում՝

1) պետք է վերադարձնել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանն իր բնակության վայրերը և ըստ ամենայնի աջակցել նրանց, որ չհեռանան,

2) պետք է ամրապնդել ռուս խաղաղապահների ներկայությունը Լեռնային Ղարաբաղում,

3) պետք է թույլ չտալ նրանց հեռացումն անգամ հինգ տարի հետո՝ որևէ մեկի պահանջով:

Սա, իհարկե, կարող է լինել միայն միջանկյալ լուծում, որը սակայն երկար ժամանակվա համար չի կարող գործել: Պետք է ենթադրել, որ Մոսկվայում չեն կասկածում, որ Թուրքիան ու Ադրբեջանն առաջին իսկ հարմար պահին կձգտեն տարածաշրջանից հեռացնել ռուս խաղաղապահներին, քանի որ նրանք կխանգարեն իրականացնել Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերջնական լուծում «ադրբեջանական ձևով»՝ Լեռնային Ղարաբաղի հայերի նկատմամբ ցեղասպանության իրականացումը [45]: Պարզ է, որ այդ «լուծումը» հակասում է Ռուսաստանի վերոհիշյալ աշխարհաքաղաքական նպատակի իրագործմանը:

Հետևաբար, խնդրի լիարժեք լուծումը «ռուսական ձևով» կարող է լինել երկրորդ փուլով՝ խնդրի ամբողջական կարգավորումն ու Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի որոշումն ամբողջությամբ «Մադրիդյան սկզբունքների» հիման վրա, դրա արդյունքում Լեռնային Ղարաբաղի անկախության միջազգային ճանաչումն ու պայմանագրի կնքումը Ռուսաստանի հետ՝ ապահովելով խաղաղապահ ուժերի պահպանումն անորոշ ժամանակով՝ որպես Լեռնային Ղարաբաղի անվտանգության ու անկախության երաշխավոր: Իհարկե, այս երկու փուլերը որոշ առումներով միմյանց հակասում են, և շատ լուրջ ու բարդ աշխատանք է պետք այն իրագործելու համար: Առաջին փուլում Մոսկվան փորձում է գործընթացը հեռու պահել (աշխարհա)քաղաքական ազդեցություններից, խուսափում է Ադրբեջանի ու Թուրքիայի հետ կոշտ հակադրություններից, անգամ որոշ իրավիճակներում օգտագործելով նրանց համար ականջահաճո ձևակերպումներ ու մոտեցումներ: Դա

[45] The Anatomy of Genocide: Karabakh's Forty-Four Day War, International Christian Concern, *Persecution*, January 2021, https:\www.persecution.org\wp-content\uploads\2021\01\Anatomy-of-a-Genocide.pdf

հատկապես նկատելի է պատերազմից հետո անցած առաջին ամիսներին՝ հակամարտության կարգավորմանն ու Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին վերաբերող հարցերում:

Նոյեմբերի 9-ի հայտարարության հրապարակումից հետո ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Միացյալ Նահանգներն ու Ֆրանսիան, ինչպես նաև Եվրամիությունը հայտարարել են, որ ռազմական գործողությունների դադարեցումը բազմամյա հակամարտության կարգավորման ուղղությամբ արված միայն առաջին քայլն է: Համապարփակ և կայուն կարգավորում ապահովելու, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշման նպատակով կոչ են արել վերսկսել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ձևաչափով բանակցությունները Հելսինկյան եզրափակիչ ակտի երեք սկզբունքների հիման վրա:

Այդ դիրքորոշումները ներկայացնելու նպատակով նոյեմբերի 18-ին Մոսկվայում տեղի ունեցավ Մինսկի խմբի համանախագահների հանդիպումը Ռուսաստանի արտգործնախարար Ս. Լավրովի հետ: Քանի որ հանդիպումից հետո որևէ համատեղ հայտարարություն չտարածվեց, կարելի էր ենթադրել, որ կա՛մ առաջացել են տարաձայնություններ Ռուսաստանի և մյուս համանախագահող երկրների միջև հակամարտության ամբողջական կարգավորման վերաբերյալ, կա՛մ համաձայնության են եկել դրան անդրադառնալ հրադադարի ռեժիմի ամրապնդումից հետո: Ավելի ուշ Ս. Լավրովը հայտարարեց, որ որոշ երկրներ դեմ են հայտարարությանը, որի այլընտրանքը պատերազմի վերսկսումն է: Եթե սկզբում դա ընկալվեց որպես արձագանք մյուս համանախագահների այցին, ապա ավելի ուշ պարզ դարձավ, որ պարզապես Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության մարտավարական քայլն էր՝ նոյեմբերի 9-ի հայտարարությամբ նախատեսված գործողությունների իրագործումը չվտանգելու նպատակադրումով:

Թեև հայտարարությունը թույլ էր տվել հրադադար հաստատել, սակայն դրա 9 կետերից միայն 5-ն է վերաբերում հրադադարին, մյուս 4-ը առնչվում է խնդրի կարգավորմանը՝ բացառապես ի շահ Ադրբեջանի, դուրս թողնելով մի շարք առանցքային հարցեր, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը[46]: Բացառիկ նշանակություն ունի հայտարարության այդ՝ 2-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ կետերի ազդեցությունը հետագա զարգացումների վրա՝ խնդրի լիարժեք ու վերջնական կարգավորման տեսակետից: Հետևաբար, այդ կետերը հարկ է դիտարկել ոչ թե որպես պատերազմի արդյունք, այլ կարգավորման բաղադրիչներ՝ միջազգային

[46] Տ. Թորոսյան, Դիվանագիտական լուծում կա. Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հնարավորություններն ու հեռանկարները 2020թ. պատերազմից հետո, https:\luys.am\img\artpic\small\ca628a9162b4fa5916e3Դիվանագիտականլուծումկա.pdf

իրավունքին համապատասխանության տեսակետից: Չափազանց կարևոր է, որ թեև նոյեմբերի 18-ին Մոսկվայում Ս. Լավրովի և Մինսկի խմբի համանախագահների հանդիպումը չէր ավարտվել հայտարարության ընդունմամբ՝ կարգավորման գործընթացի վերաբերյալ, սակայն արդեն դեկտեմբերի 3-ին համանախագահող երկրների պատվիրակությունների ղեկավարների Ռուսաստանի արտգործնախարար Ս. Լավրովի, ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ս. Բիգունի և Ֆրանսիայի արտաքին գործերի և Եվրոպայի նախարար Ժ.-Ի. լը Դրիանի հանդիպումը Տիրանայում ավարտվեց վերոհիշյալ համատեղ հայտարարությամբ [47] , որը ստեղծված իրավիճակում ստացել է բացառիկ կարևորություն՝ Լեռնային Ղարաբաղի կարգավորման հեռանկարների տեսանկյունից:

Այս երկամսյա, բայց հարափոփոխ փուլի ազդեցությունը նկատելի է նաև Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինի հայտարարությունների վրա: Մասնավորապես, տարեվերջյան՝ դեկտեմբերի 17-ի մամուլի ասուլիսի ժամանակ, պատասխանելով Լեռնային Ղարաբաղի խնդրին առնչվող հարցին, նա միանգամից մի քանի արձանագրումներ է արել, որոնք անդրադարձի կարիք ունեն.

«Թուրքիայի դիրքորոշումը հիմնված է այն բանի վրա, որ, դրա մասին հրապարակայնորեն ասել են, Թուրքիան պաշտպանել է, ինչպես իրենք են ասում, Ադրբեջանի արդար գործը, տարածքների վերադարձը, որոնք օկուպացվել էին 90-ական թվականների ռազմական գործողությունների ընթացքում: Միջազգային իրավունքի տեսակետից, ես նույնպես այդ մասին ասել եմ, այդ բոլոր տարածքները Ադրբեջանի Հանրապետության անբաժանելի մասն են: Եվս մեկ անգամ կրկնեմ. Հայաստանն ինքը չի ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը, այդ պատճառով այդ իմաստով, ի նկատի ունենալով այդ հանգամանքը, բուն Լեռնային Ղարաբաղը, այն նույնպես միջազգային իրավունքի տեսակետից Ադրբեջան է: Բայց իրավիճակը, իմ կարծիքով, ավելի բարդ է, քան պարզ նորմատիվային պոստուլատները: Էթնիկ հակամարտության արմատները, որ սկսվել է դեռևս Սումգայիթում, ապա տեղափոխվեց Լեռնային Ղարաբաղ: Այստեղ ամեն կողմն ունի իր ճշմարտությունը: Եվ Լեռնային Ղարաբաղի հայերը ժամանակին զենք վերցրեցին, որպեսզի պաշտպանեն իրենց կյանքն ու արժանապատվությունը: Եվ ստեղծվեց իրավիճակ, որը ձևավորվել էր այս տարի հակամարտության սրման պահին: Եվ շատ կարևոր հանգամանք. պայմանավորվել ենք, որ կողմերը կանգնում են այն դիրքերում,

[47] Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries, http://www.osce.org/minsk-group/472419 , 03.12.2020.

որտեղ գտնվում էին եռակողմ հայտարարության պահին: Այնտեղ էլ պետք է բոլորը կանգնեն»[48]:

Իհարկե, ռազմական գործողությունների զարգացման տեսակետից տրամաբանական կլիներ, որ բոլորը կանգնեին այնտեղ, որտեղ գտնվում էին հայտարարության պահին: Բայց մի՞թե Վ. Պուտինը չգիտեր, որ դա իրականությանը չի համապատասխանում, քանի որ այդ փաստաթուղթը սահմանում էր, որ ստորագրելուց հետո Ադրբեջանին պետք է հանձնվեն Քարվաճառի շրջանը, Լաչինի մի մասը: Ավելին, անգամ ռուսական խաղաղապահների տեղակայումից հետո Ադրբեջանին հանձնվեցին հայկական բնակավայրեր, որոնք միշտ բուն Լեռնային Ղարաբաղի կազմում են եղել: Տարօրինակ մոտեցումներ են բացահայտում նաև նախագահ Պուտինի անդրադարձերն այն խնդիրներին, որոնք կարգավորվում են միջազգային իրավունքի նորմերով: Ըստ նախագահ Պուտինի՝ Թուրքիան կարող է մասնակցել ռազմական ագրեսիայի, եթե հրապարակավ հայտարարում է, որ «Ադրբեջանի գործն արդար է»: Ապա, պարզվում է, Հայաստանն է որոշում՝ Լեռնային Ղարաբաղը անկախ պետք է լինի, թե ոչ, ու եթե չի ճանաչել, ապա այն Ադրբեջան է: Հետաքրքիր է, ինչ կասի նա, եթե Հայաստանի հաջորդ իշխանությունը ճանաչի Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Խճճվելով՝ Վ. Պուտինը անցնում է միջազգային իրավունքի տեսակետից Լեռնային Ղարաբաղի պատկանելության հարցին և պարզվում է, որ այս հարցում ևս, ինչպես հակամարտության պատմության հարցում, իրեն լրջորեն մոլորեցրել են: Պատկերն ամբողջականանում է, երբ մի քանի րոպե անց, պատասխանելով «Բի Բի Սի Նյուզի» թղթակից Սթիվ Ռոզենբերգի հարցին՝ Ղրիմի «բռնազավթման» վերաբերյալ, նախագահ Պուտինի պատասխանը հնչում է բոլորովին այլ հարթությունում. «Կոսովոյում խորհրդարանը որոշում ընդունեց, և դուք բոլորդ դա կուլ տվեցիք ու ասացիք, որ այդպես ճիշտ է, դա ժողովրդավարական է: Ղրիմում մարդիկ եկան հանրաքվեի, քվեարկեցին, սակայն ձեզ, չգիտես ինչու, դա դուր չի գալիս: Ցանկանում եմ հիշեցնել, որ ժողովրդավարությունը ժողովրդի իշխանությունն է, և կա՛մ պետք դա ընդունել, կա՛մ այդ դեպքում այդ եզրույթից հրաժարվել ընդհանրապես ամենուրեք»[49]: Իհարկե, պետք է լիովին համաձայնել այս հարցադրման հետ, անգամ այն ուժեղացնել, հիշեցնելով, որ միջազգային իրավունքը ցանկացած ժողովրդի՝ առանց որևէ վերապահման, տալիս է այդ իրավունքը՝ իր կամքի ազատ արտահայտմամբ որոշելու իր քաղաքական կարգավիճակը: Ուրեմն, նախագահ Պուտինը նույն մոտեցումը

[48] Ежегодная пресс-конференция Владимира Путина, http:\kremlin.ru\events\president\news\64671
[49] Ежегодная пресс-конференция Владимира Путина, http:\kremlin.ru\events\president\news\64671

պետք է ունենա նաև Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ, քանի որ որպես Մինսկի խմբի համանախագահող երկրի ղեկավարի՝ համապատասխան կառույցները պետք է զեկուցած լինեն, որ 1991թ. այնտեղ, միջազգային իրավունքի բոլոր պահանջների խստիվ պահպանմամբ, միջազգային դիտորդների ներկայությամբ տեղի է ունեցել հանրաքվե: Ի դեպ, թեև Բաքուն կոչ էր արել տեղի ադրբեջանցիներին չմասնակցել հանրաքվեին, այնուամենայնիվ, նրանց զգալի մասը մասնակցել է[50]:

Ուշագրավ է նաև ՌԴ ԱԳ փոխնախարար Անդրեյ Ռուդենկոյի պատասխանն «Իզվեստիայի» այն հարցին, թե որքան ժամանակ կպահանջվի Ղարաբաղի կարգավիճակը որոշելու համար.

«Այսօր հրադադարը պահպանվում է ռուսական խաղաղապահ զորախմբի կողմից, որը տեղակայված է կողմերի շփման գծի երկայնքով և Լաչինի միջանցքում: Տարածաշրջանում մեր խաղաղապահների ներկայությունը իրադրության կարգավորման համար անհրաժեշտ պայմանների ապահովման գործոն է ոչ միայն Ղարաբաղում, այլև Բաքվի և Երևանի հարաբերություններում ընդհանրապես:

Կցանկանայի միաժամանակ շեշտել, որ հունվարի 11-ի մոսկովյան գագաթնաժողովում և՛ Ադրբեջանի, և՛ Հայաստանի առաջնորդները հաստատել են հենց այս ուղղությամբ ընթանալու պատրաստակամությունը: Այս նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ երեք երկրների փոխվարչապետների նախագահությամբ: Խմբի հիմնական խնդիրն է տրանսպորտային և տնտեսական հաղորդուղիների ապաշրջափակումը:

Ակնկալում ենք, որ այս ուղղությամբ համատեղ ջանքերը կօգնեն հեռանկարում բարենպաստ միջավայր ստեղծել ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի լուծման ոչ հակամարտային մոտեցումների մշակման համար: Կցանկանայի նշել, որ այս պահանջարկված ձևաչափի առումով մշակված մի շարք սկզբունքներ իրենց արտացոլումն են գտել նաև նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության տեքստում»[51]:

Արդյո՞ք պատահաբար է համանախագահ երկրներից մեկի արտաքին գործերի փոխնախարարն օգտագործում ոչ թե իր անմիջական ղեկավար նախարարի ստորագրած դեկտեմբերի 3-ի հայտարարության մոտեցումը, որ համանախագահ

[50] T. Torosyan, Conflict Resolution in the Framework of the International Law: Case of Nagorno-Karabakh. 2010.

[51] А. Руденко, Видим стремление Запада перекроить постсоветское пространство, *Известия*, 19.02.2021.
https://iz.ru/1122605/tatiana-baikova/vidim-stremlenie-zapada-perekroit-postsovetskoe-prostranstvo

երկրները հետևողական և միասնական դիրքորոշում ունեն բոլոր մնացած հիմնական հարցերը կարգավորելու վերաբերյալ՝ «հիմնական սկզբունքների և տարրերի համաձայն, որոնք լավ հայտնի են ինչպես Հայաստանին, այնպես էլ Ադրբեջանին», այլ «Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի լուծման ոչ հակամարտային մոտեցումների մշակում» ձևակերպումը:

Այս, մեղմ ասած, «խառնաշփոթը» կարելի է տարբեր ձևերով բացատրել: Սակայն ամենահիրականն այն է, որ քանի դեռ Լեռնային Ղարաբաղում ռուս խաղաղապահները լիարժեքորեն չեն ամրապնդվել և Հայաստանում իշխանափոխություն տեղի չի ունեցել, Ռուսաստանի ներկայացուցիչների խոսքը ասվելու է՝ նայելով դեպի Բաքու և Անկարա: Տգետ, ստախոս և նվաստացված իշխանությանը որևէ մեկը չի նկատելու և հաշվի չի առնելու:

2.3. Թուրքիա և Ադրբեջան. գայթակղել ԵՄ-ին՝ հանուն թյուրքական աշխարհի

Թուրքիայի լիակատար մասնակցությունն ադրբեջանական ագրեսիային թելադրված էր ոչ միայն էթնիկ համերաշխության դրսևորմամբ, այլև այն հանգամանքով, որ հաջողությունը հնարավորություն կտար գոնե մասնակիորեն իրագործել հետխորհրդային տարածքի երկու տարածաշրջաններում՝ Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում գերիշխանություն հաստատելուն ուղղված և 90-ականների սկզբին տապալված ռազմավարական նկրտումների[52] առնվազն մի մասը: Հատկապես, որ վերջին շրջանում ձևավորվել են դրա համար բարենպաստ նախադրյալներ՝

- Ռուսաստանի աննախադեպ բարդ հարաբերություններ Արևմուտքի հետ,
- կարճաժամկետ հեռանկարում աշխարհաքաղաքական հավասարակշռության հաստատման փոքր հավանականություն,
- Եվրամիության շարունակվող հետաքրքրությունը ռուսականին այլընտրանքային էներգակիրների տեղափոխման «Հարավային միջանցքի» նկատմամբ,
- Իրանի հետ ռազմավարական դիմակայությունում դիրքերի ամրապնդման հեռանկարներ,

[52] T. Torosyan, The Return of Turkey. *Russia in Global Affairs*, No 3, July-September. 2009, pp. 120-129.

• որոշ տարածաշրջանների նկատմամբ Միացյալ Նահանգների հետաքրքրության նվազում՝ որպես նախագահական նախընտրական և հետընտրական շրջանների հետևանք և այլն:

Քանի որ Թուրքիան լուրջ խոչընդոտներ ունի առավել ազդեցիկ երկրների աջակցությամբ իր նպատակներին հասնելու համար (ԱՄՆ՝ C-400-ի հետ կապված խնդիրը, Չինաստան՝ ույղուրների խնդիրը, Ռուսաստան՝ Սիրիա և Հարավային Կովկաս, ԵՄ՝ Արևելյան Միջերկրածովյան շրջան), այս անգամ պետք է կարողանա ներկայանալ որպես ինքնուրույն և անհրաժեշտ ներուժ ունեցող դերակատար[53]: Դրան նպաստում է այն հանգամանքը, որ Անկարան Ադրբեջանում թողել է ռազմական ստորաբաժանումներ, մասնակցում է Լեռնային Ղարաբաղում հրադադարի պահպանման մոնիտորինգին և, ինչպես պնդում է, կարող է ուղիղ կապ ունենալ Կասպից ծովի և Կենտրոնական Ասիայի հետ՝ Ադրբեջանի և Նախիջևանի միջոցով, եթե իրականություն դառնա այսպես կոչված «Նախիջևանի միջանցքը»:

Նոյեմբերի 9-ի Ադրբեջան-Հայաստան-ՌԴ եռակողմ հայտարարությունը ստորագրելուց հետո Անկարան արդեն հայտարարել է Նախիջևանով երկաթուղի կառուցելու մասին: Այս նպատակների իրագործման և զարգացման համատեքստում պետք է դիտարկել 2021թ. հունվարի 13-ին «Իսլամաբադի հռչակագրի» ստորագրումը Թուրքիայի, Ադրբեջանի և Պակիստանի արտգործնախարարների կողմից[54]:

Անկարան փորձում է նաև ընդլայնել Թյուրքական խորհուրդը՝ այնտեղ ներգրավելով Թուրքմենստանին [55] : Դա հատկապես գրավիչ է ոչ միայն տեսականորեն՝ Թուրքմենստանի գազի հսկայական պաշարների տեսակետից, այլ նաև կասպյան կոնկրետ ածխաջրածնային հանքավայրի հետ կապված, որը երկար տարիներ Ադրբեջանի ու Թուրքմենստանի վեճի առարկան էր, անգամ Աշգաբատն այն անվանում էր «Սերդար», իսկ Բաքուն՝ «Քյափազ»: Այդ երկրները 2021թ. համաձայնության են եկել Կասպից ծովում գտնվող վիճելի հանքավայրը «Դոստլուղ» («բարեկամություն») կոչելու և համատեղ հետախուզման ու շահագործման վերաբերյալ:

Ակնհայտ է, որ նոր ձևակերպում է ստանում ադրբեջանաթուրքական աշխաջրածնային «հեքիաթը», որը մի ժամանակ կոչվում էր «Նաբուկո», իսկ վերջին

---

[53] Ֆ. Իլյաս, Թուրքիան փոխում է ուժերի հավասարակշռությունը Կենտրոնական Ասիայում, 22.01.2021, https://www.noonpost.com/content/39566

[54] Նույն տեղում:

[55] M. Aybike Sinan, Türkmenistan'i yok mu sayalim? *Türkiye gazetesi*, 25.01.2021, https://www.turkiyegazetesi.com.tr/yazarlar/meryem-aybike-sinan/617285.aspx

շրջանում՝ «Հարավային գազային միջանցք»[56]: Թեև պետք է հիշեցնել, որ «Նաբուկոն» ընդամենը մի քանի տարի առաջ հենց «Հարավային միջանցքի» գլխավոր գազատարը պետք է դառնար: Սակայն երկար դեգերումներից հետո ԵՄ որոշ պաշտոնյաներ ի վերջո հասկացան, որ թանկարժեք «Նաբուկոն» ոչ մի իրական շանս չունի իրագործվելու, քանի որ պարզապես գազ չկա դրանով տեղափոխելու համար, և նախագծի հետ կապված գործընթացները դադարեցվեցին[57]: Քանի որ Թուրքիայից Եվրոպա գնացող գազամուղների օգտագործման կամ նորերի կառուցման որևէ խնդիր չկա, Անկարան փորձելու է նոր ոգևորությամբ այս ամենը ներկայացնել ԵՄ-ին՝ որպես ռուսական գազային կախվածությունից ազատվելու միանգամայն իրական և եզակի հնարավորություն: Այդ ուղղությամբ քարոզչական քայլերը արդեն արվում են՝ Բրյուսելին «աչքալուսանք» տալով, որ հարավային Եվրոպայում ադրբեջանական գազը սկսել է փոխարինել ռուսականին[58]: Ընդ որում, թյուրքական երկու պետություններն այսպես կոչված «Նախիջևանի միջանցքը» կարևորելու են «Հարավային միջանցքի» իրագործման տեսակետից: Հետևաբար, արժե առանձնացնել աշխարհաքաղաքականության և էներգակիրների ազդեցությունը ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի վրա:

2.4. Աշխարհաքաղաքականություն և էներգակիրներ. լրացուցիչ, բայց ոչ երկրորդական գործոն

Էներգակիրների տեղափոխման խնդրի և, ընդհանրապես, տարածաշրջանում աշխարհաքաղաքական մրցակցության ազդեցությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վրա հատկապես ակնառու է 2000-ականների սկզբից[59]: 2020թ. ադրբեջանաթուրքական ագրեսիայի արդյունքները Բաքվին ու

---

[56] Տ. Թորոսյան, Գ. Արշակյան, Ռուս-թուրքական մրցակցությո՞ւն, թե՞ համագործակցություն, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 1(5), 2016, 5-34:

[57] Նույն տեղում: Տ. Թորոսյան, Ա. Վարդանյան, Եվրասիական կենտրոնի մեծ աշխարհաքաղաքական վերաբեռնավորման ավարտը, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2020, 1, 5-52:

[58] A. Cohen, Bad News For Russia, As Gas From Azerbaijan Now Flows To Western Europe, *Forbes*, 06.01.2021, https://www.forbes.com/sites/arielcohen/2021/01/06/azeri-gas-reaches-europe-through-the-southern-gas-corridor/?sh=1ddd434e40e4.
Важен за Европа газов проект минава близо до сраженията за Нагорни Карабах, *Дневник*, 08.10.2020, https://www.dnevnik.bg/sviat/2020/10/08/4123864_vajen_za_evropa_gazov_proekt_minava_blizo_do/

[59] T. Torosyan, A. Vardanyan, The South Caucasus Conflicts in the Context of Struggle for the Eurasian Heartland, *Geopolitics*, 2015, 20, 3.

Անկարային հնարավորություն են տվել ավելի գրավիչ տեսքով ներկայացնել կասպիական ավազանի (հատկապես՝ Թուրքմենստանի) գազի հսկայական պաշարները Եվրոպա տեղափոխելու «նոր» «հեռանկարներ»: Հաճախ այնպես է ներկայացվում, որ Թուրքիայի համար կասպյան ավազանի ուղիղ մատչելիությանն այլևս խոչընդոտում է միայն Հայաստանի հարավային շրջանի մի քանի տասնյակ կիլոմետրը, որի հարցն էլ, իբրև թե, սկզբունքորեն լուծվել է 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 9-րդ կետով: Իհարկե, Ադրբեջանը, ինչպես երբեք, կարիք ունի նավթադոլարների, քանի որ պատերազմական ծախսերը շատ լուրջ բեռ դարձան Բաքվի համար, որն առանց այդ էլ լրջորեն մտահոգված է այն կանխատեսումներով, որ 2030թ. կտրուկ կնվազեն իր աշխաջրածնային պաշարները[60]: Ճիշտ է, 2020թ. վերջին շահագործման հանձնվեց տրանսադրիատիկ գազամուղը, որը թույլ կտա տրանսանատոլյան (TANAP) գազամուղով 16 մլրդ խմ ադրբեջանական գազը հասցնել Թուրքիա, ապա դրանից 8 մլրդ խմ տեղափոխել Իտալիա, 1 մլրդ՝ Ալբանիա և Հունաստան, 1 մլրդ խմ էլ՝ Բուլղարիա[61], սակայն թե՛ դրանից ստացվող եկամուտը, թե՛ գազ ստացող երկրների ազդեցությունը եվրոպական քաղաքականության վրա չեն կարող բավարարել երկու թյուրքական պետությունների ո՛չ տնտեսական, ո՛չ քաղաքական ակնկալիքները: Հետևաբար նրանց գլխավոր թիրախը կլինի, ըստ օպերատորի գնահատման, 40 միլիարդ դոլար արժողության «Հարավային միջանցքը»[62], որի լիարժեք կառուցումը կախված է մի քանի խնդիրների լուծումից: Նախ, որքան էլ փորձեն համոզել, թե 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 9-րդ կետի բովանդակությունը թույլ է տալիս պնդել, որ Նախիջևանը Ադրբեջանից բաժանող հայաստանյան 40 կմ երկարության տարածքով հաղորդակցային խնդիրները լուծված են, այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ նման հայտարարությունները ոչ մի պարտադրող ուժ չունեն պետությունների համար, և ադրբեջանաթուրքական դաշինքի նկատմամբ Ն. Փաշինյանի գլխավորած կառավարության տարօրինակ բարեհաճությունը արագորեն ի չիք կդառնա Հայաստանում իշխանության փոփոխությունից հետո: Ընդ որում, ըստ որոշ եվրոպացի վերլուծաբանների.

---

[60] J. Losh, Russian Troops in Nagorno-Karabakh 'Clearly a Win for Moscow', *Foreign Policy*, 25.11.2020, https:\foreignpolicy.com\2020\11\25\russian-troops-nagorno-karabakh-peackeepers-win-moscow-armenia-azerbaijan\

[61] U. Heyden, Sichert 40-Milliarden-Pipeline den Frieden in Berg-Karabach? *Telepolis*, 11.01.2021, https://www.heise.de/tp/features/Sichert-40-Milliarden-Pipeline-den-Frieden-in-Berg-Karabach-5019562.html

[62] Նույն տեղում:

«...Պատերազմի ավարտի և գազատարի շահագործման հանձնման ժամանակների գրեթե համընկումը («Հարավային գազային միջանցքը» շահագործման է հանձնվել 2020թ. նոյեմբերի 20-ին և գործարկվել է դեկտեմբերի վերջին - Տ. Թ.) ցույց է տալիս, թե Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն ինչքան էր խանգարում Հարավային Կովկասի նավթային և գազային պաշարների արդյունահանմանը: Բայց նա [Ալիևը] հավանաբար մտածում էր, որ կարող է արագ, դեռ մինչև գազատարի բացումը, բլիցկրիգով գրավել Լեռնային Ղարաբաղը և միացնել Ադրբեջանի տարածքին: Սակայն դա տապալվեց Ղարաբաղի և Հայաստանի ռազմական գործողությունների, ինչպես նաև Վլադիմիր Պուտինի ջանքերի շնորհիվ, որը ստիպեց Ալիևին համաձայնագիր (իրականում՝ հայտարարություն - Տ. Թ.) ստորագրել Հայաստանի հետ, երբ ադրբեջանական զորքերը Ստեփանակերտի մոտ էին»[63]:

«Հարավային գազային միջանցքի» զարգացման տեսակետից, սակայն, էական նշանակություն չունի թե 2020թ. ղարաբաղյան պատերազմի հետևանքներն ինչ ազդեցություն կունենան, մասնավորապես՝ կստեղծվի՞ «Նախիջևանի միջանցքը», թե՞ ոչ: Նման հարցերում որոշիչ է ոչ թե գազատարի կառուցումը, այլ անհրաժեշտ ծավալի գազի առկայությունը: Առավել ևս, որ ադրբեջանական գազի այն ծավալները, որոնք իրական են տեսանելի ապագայում (16 մլրդ խմ), արդեն իրացվում են առկա գազատարով: Ավելին, եթե Ադրբեջանում կա անհրաժեշտ ծավալի գազ կամ այն կարող է այլ տեղից (օրինակ, Թուրքմենստանից) տեղափոխվել այնտեղ, ապա ինչու այդ գազը մինչև հիմա չէր տեղափոխվում գործող Բաքու-Թբիլիսի-Էրզրում (ԲԹԷ) երթուղով, կամ ինչո՞ւ փակվեց տարիներ շարունակ համառորեն գովազդվող ու զգալի ծախսեր պահանջած «Նաբուկոն»: Իհարկե, ԲԹԷ-ն որոշ չափով ավելի երկար է, քան, եթե գազատարն անցնի Նախիջևանով, սակայն դա էական ազդեցություն չի ունենա ընդհանուր ծախսերի վրա: Առավել ևս, որ ԵՄ-ն մեծ հետաքրքրություն ունի ոչ ռուսական աղբյուրներից գազի ներմուծման նկատմամբ: Պարզ է, որ նման խիստ հիպոթետիկ աղբյուր կարող են լինել թուրքմենական գազի պաշարները: Պատահական չէ, որ «Նախիջևանի միջանցքի» գրավչությունը քարոզչական հրապարակումները բացատրում են նրանով, որ իբր Թուրքիայի համար այդ դեպքում Կենտրոնական Ասիան դառնում է մատչելի: Մինչդեռ տարածաշրջանի մասին պատկերացումներ ունեցողները չեն կարող չտեսնել, որ այն անգամ իրականություն դառնալու դեպքում սոսկ միացնում է Թուրքիան Ադրբեջանին և որևէ ձևով չի ազդի Անկարայի համար Կենտրոնական Ասիայի մատչելիության վրա: Սակայն պետք է

[63] Նույն տեղում:

արձանագրել, որ այդ կապը երկու թյուրքական պետությունների համար ունի ռազմավարական նշանակություն: Հետևաբար, ադրբեջանաթուրքական տանդեմը փորձում է իրականում ոչ թե «Նախիջևանի միջանցքը» օգտագործել «Հարավային միջանցքի» իրագործման համար, այլ վերջինս օգտագործել «Նախիջևանի միջանցքը» ստանալու համար: Խնդրի նենգափոխումը երբեք խորթ չի եղել այդ երկրների համար: Պատահական չէ, որ Թուրքիան և Ադրբեջանը մեծապես կարևորում են ապատեղեկատվության տարածումն ինչպես պետական լրատվամիջոցներով[64], այնպես էլ օտարերկրյա լոբբիստական և հետազոտական կենտրոնների ներգրավմամբ.

«Ադրբեջանը շարունակաբար ուժեղացնում է քարոզչությունը՝ դրանում ներգրավելով ոչ թե մեկ ընկերություն, ինչպես Հայաստանը (Alston and Bird, պայմանագիրը կնքվել է 2020-ին, բայց որևէ ծախս դեռևս արված չէ), այլ 6 հասարակական կարծիքի ձևավորման ազդեցիկ ընկերություններ, այդ թվում՝ «Լիվինգսթոն գրուփը» (Livingston Group), «Սթելար Ջեյ Քըմյունիքեյշնսը» (Stellar Jay Communications), «Բի Ջի Արը» (BGR), «Պոդեստա գրուփը» (Podesta Group) «Դի Էլ Էյ Փայփըրը» (DLA Piper): 2019թ. Բաքուն լոբբիստական ծառայությունների համար, միայն հրապարակային տվյալների վկայությամբ, ծախսել է 1,3 մլն դոլար: Այդ ծառայությունները բազմազան են: Հանդիպումներ են կազմակերպվում համալսարաններում, վերլուծական կենտրոններում, կոնգրեսում, բարենպաստ հոդվածների հրապարակումներ են կազմակերպում մի շարք պարբերականներում՝ The Hill, Washington Times, Daily Caller, National Review, Washington Post, New York Times. Ընդ որում, սկզբում այդ նյութերը հրապարակվում էին առանց Ադրբեջանի հետ հեղինակների ֆինանսական կապերի բացահայտման»[65]:

Բայց սա միայն «սառցալեռան» երևացող մասն է, որն անհամեմատելի է չերևացողի համեմատ: Շվեյցարական Tagesanzeiger.ch և 24Heures.ch լրատվամիջոցներում հրապարակումներով հետաքննող լրագրող Մարկուս Հեֆլիգերը բացահայտել է, որ Արցախի դեմ պատերազմում ադրբեջանական հիմնական ֆինանսական հոսքերը իրականացվել են 2019թ. 48 միլիարդ դոլարի հասնող տարեկան հասույթ ունեցած ՍՕԿԱՌ նավթային ընկերության միջոցով, որի

[64] S. J. Frantzman, Turkey's goal in Caucasus was to increase Russia's role – analysis, *The Jerusalem Post*, 03.01.2021, https:\www.jpost.com\middle-east\turkeys-goal-in-caucasus-was-to-increase-russias-role-654022

[65] B. Boland, As war rages Azerbaijan pumps money and propaganda into US lobbying machine, *The American Conservative,* 13.10.2020, https:\www.theamericanconservative.com\articles\as-war-rages-azerbaijan-pumps-money-and-propaganda-into-u-s-lobbying-machine\

հասույթի 76%-ը գոյացել է Շվեյցարիայում երկու դուստր ընկերությունների՝ «ՍՕԿԱՌ Էներջի Շվեյցարիայի» և «ՍՕԿԱՌ Թրեյդինգի» միջոցով. «ՍՕԿԱՌ-ը պատերազմի մեջ է: Ադրբեջանից ղեկավարվող ընկերության ֆեյսբուքյան էջից Լեռնային Ղարաբաղի հակամարտության առնչությամբ Հայաստանի դեմ ատելության խոսք և քարոզչություն է հորդում: Հազվադեպ է պատահում, որ առևտրային որևէ ընկերություն մի գիշերվա մեջ կերպափոխվի պատերազմի գործիքի»[66]:

Ծանր պայքար է սպասվում տեղեկատվական ճակատում, քանի որ Հայաստանի ու Արցախի հետագա գոյությունը պայմանավորված կլինի ոչ թե նահանջի կամ զիջումների չափով (այս հարցում պաշտոնական Բաքուն և Անկարան միշտ «անկեղծ» են եղել՝ իրենց ձգտումը Արցախին ու Հայաստանին ամբողջապես տիրանալն[67] է), այլ հարևանների ախորժակը չափավորող հաջողություններով: Դա վերաբերում է նաև տեղեկատվական պայքարին: Պատերազմի ավարտը դրա նշանակությունը ոչ թե նվազեցնում է, այլ մեծացնում: Առավել ևս, որ հետպատերազմյան մարտահրավերների լուծման ասպարեզները հաճախ լինելու են միջազգային ատյանները: Foreign Policy–ն արձանագրում է. «Եթե պատերազմը ամրապնդեց Ալիևի դրական կերպարն իր երկրում, ապա դրա սահմաններից դուրս այն հանգեցրեց հակառակ արդյունքի: Եվրոպային գայթակղելու բազմամյա փորձերը պատերազմը ոչնչացրեց: Ադրբեջանը, ստանալով ագրեսորի խարան և անկառավարելի նախագահ Էրդողանի աջակցությունը, որն օգտագործում էր սիրիացի վարձկանների, պարտվեց տեղեկատվական պատերազմում»[68]:

Արևմտյան ԶԼՄ-ներում հրապարակումների ճնշող մեծամասնության վերաբերմունքն ադրբեջանաթուրքական ագրեսիային դատապարտող բնույթ ուներ: Սակայն ավելի կարևոր է, թե արդյո՞ք դա կտա համարժեք պտուղներ ինստիտուցիոնալ մակարդակում:

---

[66] ՍՕԿԱՌ-ը մի գիշերվա մեջ կերպափոխվեց հայերի դեմ պատերազմի գործիքի. շվեյցարական մամուլի սենսացիոն բացահայտումները, https:\news.am\arm\news\617331.html, 06.12.2020:

[67] B. Blanchard, Haut-Karabakh: une attitude ferme des pays europeens est indispensable pour freiner l'interventionnisme turc, *Le Figaro*, 01.08.2021, https:\www.lefigaro.fr\vox\monde\haut-karabakh-une-attitude-ferme-des-pays-europeens-est-indispensable-pour-freiner-l-interventionnisme-turc-20210108

[68] J. Losh, Russian Troops in Nagorno-Karabakh 'Clearly a Win for Moscow', *Foreign Policy*, 25.11.2020, https:\foreignpolicy.com\2020\11\25\russian-troops-nagorno-karabakh-peackeepers-win-moscow-armenia-azerbaijan\

2.5. Արևմուտքի դիրքորոշումը. պատերազմ և կարգավորում

Ինստիտուցիոնալ մակարդակով Արևմուտքի արձագանքը 2020թ. պատերազմին և դրա հետ կապված հանգամանքներին կարելի է բաժանել երեք խմբի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների, Եվրամիության և Ֆրանսիայի արձագանքներ: Առաջինը բավական զուսպ էր, սակայն վճռական՝ միջնորդական առաքելության շարունակման և դրա շրջանակում կարգավորմանն առնչվող հարցերի, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցի լուծման հետ կապված: Կարելի է պնդել, որ ավելի ակտիվ արձագանքներին խոչընդոտում էին երկու էական գործոններ: Առաջինը կարգավորման գործընթացի նկատմամբ «թավշյա» շրջանում Հայաստանի դիրքորոշման կտրուկ փոփոխությունն է, որի արդյունքում այդ գործընթացը փաստորեն խափանվել է պաշտոնական Երևանի անհիմն ու անհեթեթ առաջարկությունների հիման վրա կառուցված նոր՝ «բանակցային տրամաբանությունը փոխելու» մոտեցմամբ: Երկրորդը նոյեմբերի 9-ի կապիտուլյացիայի ակտի ստորագրումից հետո Հայաստանի Հանրապետության իշխանությունների անտարբերությունն է Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Ակնհայտ է, որ համանախագահները սպասում են Հայաստանի իշխանությունների դիրքորոշման ներկայացմանը: Պատահական չէ, որ որպես նախկինում կարգավիճակի հստակեցման գործոն՝ թե՛ Ռուսաստանի նախագահը, թե՛ Ֆրանսիայի արտգործնախարարության ներկայացուցիչը՝ Ազգային ժողովում Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման հարցը քննարկելիս, մատնանշում էին որ Հայաստանն ինքը չի ճանաչել ԼՂ անկախությունը: Իհարկե, կա նաև երրորդ գործոնը: Դա իրավիճակի հանդարտեցումն է և նոր պատերազմի կանխումը: Հետևաբար, թեև Մինսկի խումբը վճռական է կարգավորման գործընթացը շարունակելու հարցում, ոչ ոք չեղյալ չի համարել բանակցային գործընթացի հիմնական սկզբունքներն ու դրանց հիման վրա մինչև պատերազմը ներկայացված առաջարկությունները, այնուամենայնիվ, Մինսկի խմբի հետագա գործունեության ուղղվածությունը զգալիորեն կախված կլինի ՀՀ իշխանությունների դիրքորոշումից: Ակնհայտ է, որ բանակցային գործընթացը տապալած, կապիտուլյացիայի հայտարարություն ստորագրած և խնդրի կարգավորման հարցում «թավշյա» արտաքին քաղաքականությունն այդ ամենից հետո էլ պաշտպանող [69]

[69] Ն. Փաշինյան, նշված աշխատանքը, https:\www.primeminister.am\hy\interviews-and-press-conferences\item\2021\01\04\NikolPashinyan-04-01\

իշխանությունների հետագա պաշտոնավարման դեպքում այլ մոտեցումներ կամ քաղաքականություն ակնկալելը որևէ հիմք չունի:

Իհարկե, առանձին երկրների արձագանքների մեջ ակնհայտորեն առանձնանում էր Ֆրանսիայի դիրքորոշումը: Թե՛ նախագահ Մակրոնը, թե՛ Ֆրանսիայի արտգործնախարարը, թե՛ Ազգային ժողովն ու Սենատը դատապարտել են պատերազմի սանձնազերծումը, Թուրքիայի ներգրավումը, վարձկան ահաբեկիչների օգտագործումը, քաղաքացիական բնակչության ու օբյեկտների ռմբակոծությունները, անթույլատրելի զենքերի օգտագործումը: Ավելին, թե՛ Ազգային ժողովը, թե՛ Սենատը ձայների բացարձակ մեծամասնությամբ կառավարությանը կոչ են արել ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը: Սակայն այս դեպքում ևս իրադարձությունների հետագա զարգացման տեսակետից կարևոր նշանակություն է ունենալու Հայաստանի իշխանությունների դիրքորոշումը:

Մի փոքր այլ է ԵՄ դիրքորոշումը: Սկզբում կարծիք կար, որ Բրյուսելը կարծես թե չի նկատում իրականությունը: Ըստ Բ. Բլանշարի՝ «Ադրբեջանական ուժերի խղճին են մի շարք ռազմական հանցագործություններ, այդ թվում՝ նաև հաշվեհարդարները տարեց հայերի նկատմամբ, ովքեր հրաժարվել են հեռանալ իրենց հողից: Նրանց կհիշեցնեն նաև դիակների կերպարանախեղումը, ինչպես նաև հայկական մշակութային ժառանգության, այդ թվում՝ գերեզմանների, եկեղեցիների ու հուշարձանների ոչնչացումն ու պղծումը: Մինչդեռ ԵՄ-ն անգամ էմբարգո չսահմանեց այն զենքի վաճառքի վրա, որը Թուրքիան և Ադրբեջանն օգտագործում էին հայերի դեմ»[70]: Սակայն Եվրախորհրդարանի երկու բանաձևերը տարեկան զեկույցների վերաբերյալ ներկայացրին տեղի ունեցածի ճշգրիտ պատկերը: Այն առավել ամբողջական ներկայացված է 2020 (2020/2206(INI) Արտաքին և անվտանգային ընդհանուր քաղաքականության տարեկան զեկույցում.

«Եվրախորհրդարանը.

19. ...Կրկին հայտարարում է իր վճռական աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբին:

24. ...Ափսոսում է, որ ստատուս քվոյի փոփոխություններն իրականացվել են ռազմական ուժի կիրառմամբ, այլ ոչ թե խաղաղ բանակցությունների, վճռականորեն դատապարտում է քաղաքացիական անձանց սպանություններն ու քաղաքացիական օբյեկտների և ծիսական վայրերի ոչնչացումը, դատապարտում է հակամարտության ընթացքում կասետային սպառազինության կիրառումը:

---

[70] B. Blanchard, Haut-Karabakh: une attitude ferme des pays europeens est indispensable pour freiner l'interventionnisme turc, *Le Figaro*, 01.08.2021, https:\www.lefigaro.fr\vox\monde\haut-karabakh-une-attitude-ferme-des-pays-europeens-est-indispensable-pour-freiner-l-interventionnisme-turc-20210108

...Համարում է, որ հուսալի կարգավորումը դեռ պետք է գտնել և որ խաղաղության հասնելու և տարածաշրջանի վերջնական իրավական կարգավիճակի որոշման գործընթացը պետք է գլխավորեն Մինսկի խմբի համանախագահները և հիմնվի Հիմնական սկզբունքների վրա, ...ընդգծում է այն բանի ապահովման խիստ անհրաժեշտությունը, որ Լեռնային Ղարաբաղում պետք է ապահովվի հայ բնակչության և հայկական մշակութային ժառանգության անվտանգությունը, որպեսզի ներքին տեղահանված անձանց և փախստականներին թույլ տրվի վերադառնալ իրենց նախկին բնակության վայրեր, կոչ է անում պատշաճ ձևով քննել ռազմական հանցագործությունների վերաբերյալ բոլոր մեղադրանքները և մեղավորներին պատասխանատվության ենթարկել, կոչ է անում ԵՄ-ին ավելի ակտիվ մասնակցել հակամարտության կարգավորմանը և տարածաշրջանի ճակատագիրը չթողնել այլ պետությունների ձեռքում:

32. ...Թուրքիան նպաստում է լարվածության մեծացմանը և ապակայունացնող ազդեցություն է գործում, ինչը սպառնում է տարածաշրջանային խաղաղությանն ու կայունությանը Արևելյան Միջերկրականում, Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում, ինչպես նաև նրա դերակատարությանը Սիրիայի, Իրաքի, Լիբիայի և Լեռնային Ղարաբաղի հակամարտություններում:

34. ...Թուրքիայի հետ հարաբերությունները չպետք է հիմնվեն պատրանքային և հնացած միացման գործընթացի վրա:

37. Վճռականորեն դատապարտում է Թուրքիայի ապակայունացնող դերը, որն ավելի է թուլացնում Հարավային Կովկասի ամբողջ տարածաշրջանի փխրուն կայունությունը, կոչ է անում Թուրքիային զերծ մնալ որևէ միջամտությունից Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը, այդ թվում՝ Ադրբեջանին ռազմական աջակցության առաջարկությունը, զերծ մնալ իր ապակայունացնող գործողություններից և ակտիվորեն աջակցել խաղաղությանը, բացի այդ դատապարտում է Թուրքիայի կողմից Սիրիայից և այլ երկրներից օտարերկրյա ահաբեկիչների տեղափոխումը Լեռնային Ղարաբաղ, ինչը հաստատում են միջազգային սուբյեկտները, այդ թվում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ պետությունները, ափսոսում է նրա պատրաստակամության համար ԵԱՀԿ Մինսկի խումբն ապակայունացնելու ուղղությամբ՝ հավակնություններ ունենալով հակամարտությունում ավելի վճռական դերակատարության»[71]:

[71] REPORT on the implementation of the Common Foreign and Security Policy – annual report 2020 (2020\2206(INI), https:\www.europarl.europa.eu\doceo\document\TA-9-2021-0013_EN.pdf

Ավելի սեղմ արձագանք կա 2020 (2020/2207(INI) Անվտանգության և պաշտպանության ընդհանուր քաղաքականության տարեկան զեկույցում.

«Եվրախորհրդարանը.

13. Ողջունում է Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը ռազմական գործողությունների դադարեցումը, մտահոգությամբ ընդգծում է հակամարտությունում երրորդ երկրների ռազմական ներկայությունը, մասնավորապես՝ Թուրքիայի ապակայունացնող դերը և միջամտությունը, կոչ է անում միջազգային քննություն անցկացնել ենթադրյալ օտարերկրյա վարձկանների առկայության և կասետային զինամթերքի ու ֆոսֆորային ռումբերի կիրառման վերաբերյալ, կոչ է անում Եվրամիությանը և միջազգային կառույցներին ապահովել, որ Լեռնային Ղարաբաղում ռազմական հանցագործություններն ու Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում արգելված զենքի կիրառումը չմնան անպատիժ, պնդում է հումանիտար օգնությունը բաց թողնելու անհրաժեշտությունը, գերիների ու զոհերի փոխանակման անհետաձգելիությունը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգության պահպանման անհրաժեշտությունը»[72]:

Իհարկե, այս ձևակերպումները ԵՄ խորհրդարանական կառույցի բանաձևերում են և դեռևս տեղ չեն գտել գործադիր մարմինների փաստաթղթերում, սակայն կարևոր են ինչպես Եվրամիության տարբեր կառույցների, այնպես էլ միջազգային տարբեր կազմակերպությունների ու կառույցների հետ աշխատանքի տեսակետից: Այդ աշխատանքի առյուծի բաժինը պետք է իրականացնեն ՀՀ պետական մարմինները՝ համապատասխան մասնագետների ներգրավմամբ: Արդյո՞ք պատրաստ են այդ մարմինները նման բարդ աշխատանքի, որի արդյունքներից է կախված Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակը և Հայաստանի Հանրապետության ճակատագիրը:

2.6. ՀՀ և ԼՂՀ. կործանո՞ւմ, թե՞ վերածնունդ

Արտաքին գործոններով պայմանավորված իրավիճակի վերը բերված սեղմ նկարագրությունը վկայում է, որ այն աննախադեպ բարդ է բոլոր ուղղություններով: Միաժամանակ, Մինսկի խմբի համանախագահ երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների 2020թ. դեկտեմբերի 3-ի հայտարարությունը, Մինսկի խմբի համանախագահների դեկտեմբերի 14-ի հայտարարությունը և դրան

[72] REPORT on the implementation of the Common Security and Defence Policy - annual report 2020 (2020\2207(INI), https:\www.europarl.europa.eu\doceo\document\A-9-2020-0266_EN.pdf

նախորդած այցը տարածաշրջան, 2021թ. փետրվարի 16-ին ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի վերականգնման նպատակով համանախագահների և Ադրբեջանի ու Հայաստանի արտաքին գործերի նախարարների հեռավար քննարկումը վկայում են, որ այսօր սկսել են ձևավորվել այդ գործընթացի հիմնարար մոտեցումները, քանի որ նախկինում ձևավորված առաջարկությունների որոշ տարրեր այդ ձևով այլևս կիրառելի չեն: Այդ քննարկումների արդյունքներից է մեծապես կախված Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակը և Հայաստանի Հանրապետության ճակատագիրը: Հայաստանի մասնակցությունն այդ գործընթացին գործող կառավարության մակարդակով հղի է ավելի ծանր հետևանքներով, քան մի քանի ամիս առաջ տեղի ունեցած ավերիչ ադրբեջանաթուրքական ագրեսիան: Պատճառն ավելի քան ակնհայտ է: Այն տգիտությունը, սուտն ու աճպարարությունը, որը դրսևորվել է «թավշյա» արտաքին քաղաքականության ընթացքում ու հանգեցրել աղետի, կառավարության ղեկավարի կեղծիքի բացահայտման դրսևորումները՝ սկսած Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հասարակայնության հետ կապերի պատասխանատուից՝ Շուշիի հարցը բանակցային փաստաթղթում միշտ ընդգրկված լինելու մասին հայտարարության կապակցությամբ, մինչև ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուս համանախագահը՝ ԼՂ կարգավիճակի վերաբերյալ, անարգանքի ու նվաստացման վերը բերված բազմաթիվ դրսևորումները միջազգային մամուլում՝ «թավշյա» արտաքին քաղաքականության վերաբերյալ, արհամարհական վերաբերմունքը գործընկերների ու ադրբեջանաթուրքական տանդեմի կողմից, կապիտուլյացիայի հայտարարության ստորագրման փաստը այս կառավարությանը որևէ իրավունք չեն տալիս անգամ մեկ օր տնօրինելու Հայաստանի ու Արցախի ճակատագիրը: Նոր աղետներից խուսափելու համար այդ հարցը հրատապ էր արդեն նոյեմբերի 9-ի հայտարարությունը ստորագրելուց հետո, սակայն ՀՈՒ հրամանատարության՝ կառավարության հրաժարականը պահանջող հայտարարությունից հետո դարձել է անհետաձգելի: Կառավարությանն այլևս աջակցում են միայն ոստիկանությունը, մի խումբ պաշտոնյաներ և Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնյաներ՝ Էրդողանի գլխավորությամբ:

Այն աշխատանքը, որը պահանջվում է ստեղծված իրավիճակից դուրս գալու համար, թելադրում է ոչ միայն այս կառավարության անհապաղ հեռացում, այլև աննախադեպ որակներ ունեցող կառավարության և աշխատանքային խմբերի ձևավորում բազմավեկտոր բարդ առաքելության իրականացման համար: Այն պետք է բաղկացած լինի Հայաստանի վերածննդի ծրագրից՝ վերականգնելով ու նոր որակներ հաղորդելով խարխլված քաղաքական, գիտակրթական, տնտեսական, սոցիալական,

դատական համակարգերին, զինված ուժերին, ինչպես նաև ԼՂ հակամարտության կարգավորման և Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հատուկ ծրագրից: Քանի որ հետազոտության առարկան պատերազմի հետևանքների ու արտաքին քաղաքականության գնահատումն է, ստորև կբերվի հատուկ ծրագրի սոսկ հիմնական ուղղությունների ձևակերպումը, որը վկայում է հիմնախնդրի և անհրաժեշտ աշխատանքի հսկայածավալ չափերն ու բարդությունը՝

1) ադրբեջանաթուրքական ագրեսիայի պատշաճ գնահատական միջազգային մասնագիտական (ՄԻԵԴ, Արդարադատության միջազգային դատարան և այլն) և ինտեգրման կազմակերպությունների բանաձևերով,

2) նախորդ կետի արդյունքների, ինչպես նաև Մինսկի խմբի համանախագահների, դաշնակից պետությունների հետ համագործակցության հիման վրա Արցախի Հանրապետության անկախության ճանաչման գործընթաց,

3) ԼՂԻՄ-ի և Շահումյանի շրջանի տարածքների վերադարձ Արցախի Հանրապետության ենթակայությանը կամ դրանց գրավյալ մասերի տարածքային փոխհատուցում,

4) զինված ուժերի վերականգնում և սպառազինության համալրում, պաշտպանական բնագծերի ամրապնդում,

5) Արցախի Հանրապետության վերականգնման և զարգացման ենթածրագրի իրականացում,

6) համահայկական գիտական, կրթական, մասնագիտական, ֆինանսական և տնտեսական ներուժի համախմբում և ուղղում ծրագրի իրագործմանը,

7) սփյուռքի նկատմամբ քաղաքականության արմատական վերանայում՝ վերոհիշյալ երկու ծրագրերի իրագործման և սփյուռքում արդյունավետ հայապահպանության նպատակով:

Այս հիմնախնդիրների լուծման անհրաժեշտ պայման է տեղի ունեցած աղետի գլխավոր քաղաքական դերակատարների շուտափույթ հեռացումն իշխանությունից:

Իրավիճակի ծայրահեղ բարդությունը, դրանից դուրս գալու աշխատանքների ուղղությունների հնարավոր ծավալները կարող են թերահավատություն առաջացնել վերոհիշյալ ծրագրերի իրականացման նկատմամբ: Սակայն, միաժամանակ, բարդ իրավիճակը լրացուցիչ խթան է անկման իրական խորությունը, խորքային պատճառները տեսնելու և ոչ ստանդարտ ծրագրերի իրականացման համար: Պահանջվում է անկախության երեք տասնամյակների ձեռքբերումների, սխրանքների, սխալների ու աղետի հասցրած ձախողումների վերագնահատում և հասարակության ու պետության հիմնարար վերակառուցում:

Նման խնդիրները հազվադեպ են լուծվում, բայց միայն այդ դեպքում է տեղի ունենում իրական վերածնունդ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2018թ. իշխանափոխությունից հետո Հայաստանի արտաքին քաղաքականության ոլորտում տեղի ունեցած իրադարձությունների, մասնավորապես, ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի, հրապարակված փաստաթղթերի ու դրանց արձագանքների վերլուծությունը, ինչպես նաև 44-օրյա պատերազմի, Լեռնային Ղարաբաղի հակամարտության և դրա կարգավորման գործընթացներում ներգրավված հիմնական դերակատարների գործողությունների վերլուծությունը վկայում է, որ.

1. Տգիտության, արկածախնդրության ու անպատասխանատվության, հակամարտությունների կարգավորման, միջազգային իրավունքի նորմերի ու դրանց կիրառման վերաբերյալ գիտելիքների իսպառ բացակայության, արտաքին ասպարեզում ևս քաղաքական հարցերը աճպարարությամբ ու ստախոսությամբ լուծելու արատավոր գործելաոճի արդյունքում Հայաստանի իշխանությունը, հակամարտության կարգավորման գործընթացը «նոր կետից» սկսելու և «բանակցային տրամաբանությունը փոխելու» անհեթեթ մարմաջով տարված, ձախողել է այդ գործընթացը՝ պատերազմ սկսելու պատրվակ ստեղծելով Ադրբեջանի համար:

2. Հայաստանի իշխանությունն անգամ ադրբեջանաթուրքական ագրեսիայի հետևանքով կրած ծանր կորուստների պարագայում շարունակել է արկածախնդրությունը մինչև լիակատար կապիտուլյացիա՝ կատարելով թշնամու բոլոր պահանջները և նրան զիջելով ոչ միայն նախկին ԼՂԻՄ-ի հարակից շրջանները, այլև այնպիսի բնակավայրեր, որոնք եղել են ինքնավար մարզի կազմում: Ընդ որում, չունենալով այդ բոլոր տարածքների նկատմամբ որևէ իրավասություն:

3. ՀՀ-ն և ԼՂՀ-ն կատարյալ աղետի հասցնելուց հետո Հայաստանի իշխանությունները փորձում են խուսափել պատասխանատվությունից՝ ստի ու աճպարարության կիրառմամբ կեղծելով հակամարտության կարգավորման գործընթացին վերաբերող իրողություններն ու փաստաթղթերի բովանդակությունը, որոնք եղել են մինչև 2018թ. սկսված արկածախնդրությունը: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները բազմիցս ներկայացրել են, որ այդ ժամանակ բանակցային

սեղանին եղած փաստաթուղթը նախատեսում էր խնդրի լուծման փաթեթային տարբերակ՝ երկու փուլով կարգավորմամբ: Առաջին փուլում նախատեսվում էր հինգ շրջանների վերադարձի դեպքում Լեռնային Ղարաբաղին տրամադրել միջազգայնորեն ճանաչվող ժամանակավոր կարգավիճակ, իսկ հաջորդ փուլում՝ Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշում ԼՂ բնակչության կամքի ազատ արտահայտման միջոցով, որի արդյունքը պարտադիր կլիներ բոլորի համար, ինչը փաստորեն անկախության միջազգային ճանաչման այլ ձևակերպում է: Այդ դեպքում էր որոշվելու, թե հայկական ուժերի վերահսկողության տակ մնացած Լաչինի և Քելբաջարի շրջանների որ տարածքների միջոցով էր ձևավորվելու ՀՀ և ԼՂՀ կապը: Իսկ Հայաստանի իշխանությունը փորձում է մոլորեցնել մարդկանց՝ հայտարարելով, որ ԼՂ կարգավիճակին այդ փաստաթուղթը չի անդրադառնում, ինչը այնպիսի աղաղակող սուտ է, որ համանախագահները ստիպված եղան հրապարակավ հերքել այդ կեղծիքը:

4. Հայաստանի իշխանությունները խաղաղ ճանապարհով այս ամենը ստանալու փոխարեն նախընտրեցին արկածախնդրությունը, որը հանգեցրեց ահռելի տարածքային, մարդկային, նյութական ու բարոյահոգեբանական կորուստների:

5. Աղետի խորացումը կասեցնելու, ՀՀ-ի և ԼՂՀ-ի հետագա կորուստները կանխելու, ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացը ճիշտ ուղղությամբ վերսկսվելու համար իրենց անկարողությունը բազմիցս ապացուցած Հայաստանի իշխանությունները պետք է հեռացվեն:

6. Թեև 2020թ. նոյեմբերի 9-ին և 2021թ. հունվարի 11-ին ընդունվել են երկու եռակողմ հայտարարություններ, այնուամենայնիվ դրանց ազդեցությունը ԼՂ հակամարտության կարգավորման վրա սահմանափակվել է մինչև պատերազմը ձևավորված կարգավորման փաստաթղթի միայն երկու տարրերի շրջանակներով: Ինչպես 2020թ. դեկտեմբերի 3-ի հայտարարությունում նշում են համանախագահ երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները, կարգավորման գործընթացը պետք է շարունակվի Մինսկի խմբի շրջանակներում և պետք է լուծվեն մնացած բոլոր հարցերը, այդ թվում՝ նաև որոշվի ԼՂ վերջնական իրավական կարգավիճակը: Մինչև պատերազմը մշակված փաստաթղթի հիման վրա դա անելու համար պետք է տարրերը լրամշակվեն, քանի որ խաղաղապահներն արդեն տեղակայված են, և տարածքների վերադարձի մասին տարրը պետք է վերաբերի ԼՂ-ի՝ Ադրբեջանի օկուպացրած տարածքներին: Քանի որ արդեն արվում են կարգավորման գործընթացի վերականգնման աշխատանքներն ու ճշգրտվում են

կողմերի դիրքորոշումները, Հայաստանն ու Արցախը բանակցություններում պետք է ներկայացնեն ոչ թե պարտված և իրենց տգիտությունն ու անպարկեշտությունն ապացուցած, երկիրը կապիտուլյացիայի հասցրած իշխանությունները, այլ բարձրակարգ մասնագետներով ապահովված նոր իշխանություններ:

7. Հակամարտության կարգավորման գործընթացում երկակի (միջնորդական և աշխարհաքաղաքական) դերակատարություն ունեցող և 44-օրյա պատերազմի դադարեցման գործում առանցքային ազդեցություն ստանձնած Ռուսաստանն իր միջնորդական պարտականությունների հաղթահարման և աշխարհաքաղաքական նպատակների իրագործման համար ստիպված է հաղթահարել երկփուլ գործընթաց, որոնցից առաջինի ընթացքում պետք է ամրապնդի խաղաղապահների տեղակայումը Լեռնային Ղարաբաղում և իրենց բնակության վայրերը վերադարձնի Արցախի հայ բնակչությանը, ապա պետք է նպաստի ԼՂ վերջնական կարգավիճակի որոշմանը՝ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ, քանի որ միայն այդ դեպքում է հնարավոր ռուս խաղաղապահների երկարաժամկետ ներկայությունը ԼՂ-ում:

8. Ադրբեջանաթուրքական 44-օրյա ռազմական ագրեսիայից հետո, որի ընթացքում ներգրավվեցին Սիրիայից և այլ վայրերից բերված ահաբեկչական խմբավորումներ, օգտագործվեցին արգելված զինատեսակներ, հրթիռակոծվեցին քաղաքացիական շինություններ, հիվանդանոցներ, սրբավայրեր՝ կյանքից զրկելով հազարավոր զինվորականների ու քաղաքացիական անձանց, այս տանդեմի երկու գլխավոր նպատակներն են՝ խաղաղապահ ուժերի (որպես հետևանք՝ նաև Հարավային Կովկասից՝ Ռուսաստանի) հեռանալուց հետո հայաթափել Արցախը և աստիճաբանար, սկսելով հարավային հատվածից, դուրս մղել հայությանը Հայաստանից՝ տարածաշրջանում լիակատար ազդեցություն հաստատելու հեռանկարով:

9. Ադրբեջանաթուրքական տանդեմն իր նպատակներին հասնելու համար կփորձի գայթակղել Եվրամիությանն այսպես կոչված «Նախիջևանի միջանցքով» կասպիական գազի մեծ պաշարներ դեպի Եվրոպա տեղափոխելու հեռանկարով: Իրականում այն սոսկ Թուրքիան կմիացնի Ադրբեջանին, քանի որ վերջինս այլևս լրացուցիչ գազի պաշարներ չունի, իսկ Թուրքմենստանի գազը Ադրբեջանով տեղափոխելու իրական ուղիներ տեսանելի ապագայի համար չկան: Նման հնարավորության առկայության դեպքում այն կօգտագործվեր 90-ականներից գործող ԲԹԷ երթուղով: «Նախիջևանի միջանցքը» իրականում ԵՄ գազի ներկրման աղբյուրների բազմազանեցման վրա որևէ ազդեցություն չունի, դրա նշանակությունը

սահմանափակվում է ադրբեջանաթուրքական աշխարհաքաղաքական հետաքրքրություններով, քանի որ նման կապի իրականացումն այդ երկու երկրներին հնարավորություն կտա զգալիորեն մեծացնել իրենց ազդեցությունը տարածաշրջանում:

10. Միջազգային հանրությունը պատշաճ գնահատական է տվել ադրբեջանաթուրքական ագրեսիայի ընթացքում թույլ տրված ռազմական հանցագործություններին, դրան Թուրքիայի մասնակցությանն ու սիրիական և այլ ահաբեկչական խմբավորումների ներգրավմանը: Անհրաժեշտ է կատարել լայնածավալ բարձրակարգ մասնագիտական աշխատանք՝ միջազգային մասնագիտական կազմակերպությունների բանաձևերի, զեկույցների ու դատապարտող որոշումների ընդունման համար, ինչը կարևոր գործոն կարող է դառնալ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշման նպատակով Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հիման վրա Արցախի Հանրապետության անկախության անհապաղ ճանաչման համար:

11. Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հիմնարար վերակառուցման համար անհրաժեշտ է ոչ միայն արագորեն ձերբազատվել աղետի հասցրած իշխանություններից, այլև նորովի, մասնագիտորեն գնահատել անցած երեք տասնամյակների ձեռքբերումների, սխրանքների, սխալների ու աղետի հասցրած ձախողումների հիմքերն ու պատճառները, ձևավորել բարձրակարգ մասնագետներով համալրված նոր կառավարություն, որը, ներգրավելով հայության բոլոր հատվածների հնարավորություններն ու հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առանցքային դերակատարությունը, պետք է մշակի և իրականացնի իրական ու խորքային համալիր ծրագրեր՝ հանուն ազգային և պետական վերածննդի:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*